№ 225 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 225

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը և 7 ամսվանը 6 բուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՄՇԱԿ

ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaktion du journal „MSHAK".

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնայում՝ Большая, 8, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆ

ՎԱՂԸ, ուրբաթ, հոկտեմբերի 12 ին VII տարեշրջանի բացումն։ Հանդիսաւոր jour-fixe-ը

ՆԱԽԱՏՕՆԱԿ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՕԲԵԼԵԱՆԻ՝ 1500-ամեայ հայ տառի եւ 400-ամեայ հայ տպագրութեան։

Այն արուեստագէտները, գրականագէտները, գեղագէտները ու լրագրողները, որոնց ձեռքը չէ հասել հրաւիրատոմս, յարգանօք խնդրվում են հաղորդել, օրպէսզի ստանան։ Կողմնակի մարդկանց համար մուտքը 3 ր.։ ՍԿԻԶԲԸ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 8-ԻՆ։

(ա.օ.) 26. 2—1

ԹՈՂԼՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ

ՋՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ

Ժողովրդ. ներկայացումներ կազմակերպող

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ

Այսօր, հինգշաբթի, հոկտեմբերի 11-ին

ՀԱՅՈՑ ԴՐ. ԸՆԿ. ԹԱՍԵՐԱՍԷՐՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻ

Կը ներկայացնէ առաջին անգամ հայ բեմի վրա Լ. ԱՆԴՐԷԵՎԻ յայտնի պիէս

ՄԵՐ ԿԵԱՆՔԻ ՕՐԵՐԸ

կամ ՈՒՍԱՆՈՂԻ ՍԷՐԸ

4 գործ., թարգմ. Վարսենիկ Աբրահամեանի

Մասնակցում են՝ տ. տ. Զաբէլ, Մանուչարեան, Յասմիկ, Սաթենիկ, օր. օր. Ագիեան, Սօլօվեան, պ. պ. Գայտաեան, Գրիգորեան, Լաքա, Մուրադեան, Յարութիւնեան, Յարութիւնեան II, Ճնեան, Սերժ, Տէր-Առաքելեան, Տէր Յովհաննիսեան, Փիրումեան և ուրիշ։

Սկիզբն է երեկոյեան ժամը 8½-ին։

Հերթ. կարգադրիչ՝ Գ. Երիցեան

760. 1—1

ԴԽՈՂԸ ԳԻՏԷ ՀԱՄԸ

ԱՆԻ ՊԱՊԻՐՕՍՆԵՐԻ

10 հատը 6 կոպ.
25 հատը 15 կոպ.

Ակց. Ընկ. «ՄԻՐ» գործարանի։

(օ.մ.) առ. 738. 10—4

По умѣреннымъ цѣнамъ
Новѣйшихъ изящныхъ рисунковъ
ПОЛНОМѢРНЫЕ

ОБОИ

ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ № 7.

(հ. կ.) 291. 50—45

Թիւրինի համալսարանի

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի։ Բժշկութիւն նաև տուբերկուլիններով, ԲԱԴԻՒՐ պրէպարատներով և էլեքտրականութեամբ։

Ընդունելութիւնը ամեն օր, ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ, առաւօտեան ժամը 9—12-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։

Սօլօլակի, Բէհբութեան փող. № 23 (անկիւն Դանովսկայայ)։ Հեռաձայն 7—92.

(ա.օ.) առ. 699. 100—19

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ա. Գ. ՓԱՆԵԱՆ

Տեղափոխվելով ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆ՝ ընդունում է հիւանդներին ամենայն օր առաւօտեան ժամը 10—2-ը երեկոյեան ժամը 5—6-ը։

Հասցէ՝ Католическая ул. № 10.

(հ.կ.) առ. 759. 4—1

ԲԺԻՇԿ

Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ

Ներքին, երեխայոց և ատամոքաղիքային հիւանդութիւններ։

Պրոֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։

Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11-ը։ երկ. ժ. 5—7-ը։

Միխայլովսկի պր. 86, տէլէֆ. № 576.

(հ.հ.կ.) առ. 179. 100—42

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՆՈՅԵՄԲ. 1-Ը 85 Կ.

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակադրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. շուտարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԻՆ ԱՆՇԽԵՏԻՆԱԲ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնայում՝ Большая, 8, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲԺԻՇԿ

Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

փոխադրվեց «Փետրվարի 19-ի փողոցը» (նախկին Պէսկովսկայա) № 30.

Վիրաբուժական հիւանդութիւններ

ՄԱՍՆԱՒՈՐՊԷՍ՝ բժշկական նորագոյն ձեւով սեռամէջային գործարանների (սուր և քրոնիկական սուսանակի), միզապամփշտային քարերի՝ առանց վիրահատութեան (փշրելով), սեռական գործարանների անկարութեան (իմպոտենցիա) և այլն, սիֆիլիսի 606 և 914-ով։ Թոքախտի բժշկումն վիրաբուժական միջոցով (արհեստական օդալանջաթաղանթ—искусств. пневмотораксъ) Forlanini, Brauer եւ այլոց ձեւով։

Ընդունելութեան ժամերը՝ առ. ժ. 12—1-ը, եր. 5—7-ը։

(ա.օ.) առ. 761. 100—1

ԲԺԻՇԿ

Յ. Մելիք-Նուբարեան

Ներքին և երեխաների հիւանդութիւնների, առանձնապէս թոքերի։

Թոքախտի բժշկութիւնը տուբերկուլիններով և պնեվմատորակսով։

Ընդունելութիւնը ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ

Ամեն օր (առաւօտեան 12—1 ժ.
(երեկոյեան 5—7 ժ.

Սօլօլակ, Բոտիչեվսկայա 10 (Էլերմոնտովսկի դեղատան դիմաց)։

(հ. հ. կ.) առ. 746. 100-6

ԲՈՒՆԱԾ ԴԻՐՔԵՐԸ

III

Ովքե՞ր են կուսակները։

Նախկին օսմանեան ընդարձակ պետութեան անջատված մասերը կենտրօնական պետութեան դէմ։

Յունաստանը, Սերբիան, Չերնոգորիան և Բոլգարիան, որոնք մանում էին օսմանեան կայսրութեան կազմի մէջ, այսօր միացեալ ոյժերով, երկաթի և կապարի զրահաւորութեամբ պատմական վրէժ են լուծում նրանից և ուզում են ազատութեան գործի շարունակութիւնը հասցնել վերջնական վախճանի։

Պատմական դրամայի խոշոր գործողութիւններից մէկն է կատարվում։

Դարեր առաջ Թիւրքական կազմակերպված հրոսակները եկան և կործանեցին գոյութիւն ունեցող իշխանութիւնները և նրանց փլատակների վրա հաստատեցին մի կայսրութիւն, որը հետևում էր ընդարձակ նուաճողական անողոք մի ծրագրի՝ ոչնչացնել ամեն բան, որ խոչընդոտ է հանդիսանում այդ ծրագրի անպայման իրագործութեան։

Անցաւ ժամանակ և մոխիրների տակ անշէջ մնացած կայծերը սկսեցին բորբոքվել, վառվել և առաջացրին հրդեհներ, որոնք աղէտաբեր եղան օսմանեան կայսրութեան համար։ Նա կամաց-կամաց սկսեց կորցնել իր նուաճած երկիրների այս ու այն մասը։ Եւ այսօր մենք տեսնում ենք նախկին կայսրութեան մասերը վերածված ինքնուրոյն, ինքնիշխան մասերի։

Բայց արդեօք հասել է այն ժամանակը, որ անջատված մասերի միացեալ գրոհը աւելի ուժեղ լինի, քան կենտրօնական մարմնի դիմադրական զօրութիւնը—ահա հարց, որ դրված է այսօր հրապարակի վրա։

Յարձակվողների միացեալ զօրքը մեծ է, բայց մեծ է և Թիւրքիայի սեփական զինուորութիւնը։

Յարձակվողները պատրաստել են զօրքեր եւրոպական հրահանգիչների ղեկավարութեան տակ։ Թիւրքիայի զօրքն էլ վաղուց կրթվում է եւրոպական ռազմագէտների ձեռքով։

Ամենից վարժ և պատրաստված համարվում է բոլգարական զօրքը։ Նա եւրոպական ամենալաւ զօրքերից մէկն է։ Զինուորները անցել են սիստեմական լուրջ մարզանքներ, օֆիցէրները ունեն որոշ կրթական պատրաստութիւն և այցելել են եւրոպական երկիրներ ռազմական գործի հետ ծանօթանալու նպատակով։

Բաւական բարձրվել է և սերբիական զօրքը, որը մի ժամանակ Միլանի օրով թուլացել էր։

Չերնոգորական զօրքը փոքր է և աւելի յայտնի է իբրև լեռնցիների ինքնաբոյս քաջամարտիկ մի զօրք։

Համեմատաբար աւելի պակաս պատրաստութիւն ունի յունական զօրքը, որը սակայն վերջին տարիներս ջանքեր է գործ դրել բարձրանալու։

Ինչ վերաբերում է թիւրքական զօրքերին, նրանք վերջին տարիներում անցել են լուրջ զինուորական դպրոց և համարվում են պատրաստ խոշոր պատերազմական գործերի համար։

Պատերազմող կողմերի զինուորական ոյժը հաշուած է այսպէս։ Անգլիական ռազմական մասնագէտները համարում են թիւրքական զօրքերի թիւը մինչև 1.000,000 հոգի, իսկ բալկանեան չորս պետութիւնները 700,000. Առաջինները պարտաւոր են պաշտպանել պետութիւնը թէ եւրոպական և թէ ասիական մասերում ընդարձակ տարածութեան վրա։ Բալկանեան պետութիւնները գործում են սահմանափակ շրջանում և աւելի մօտ են միմեանց։

Թիւրքիան իր վերոյիշեալ զօրքից հեշտութեամբ կարող է պատերազմի դաշտ ուղարկել 600,000 մարդ, իսկ միացեալ դաշնակցական պետութիւնները ոչ աւելի քան 500,000 մարդ։

Անկասկած՝ բացի զօրքի թուից պատերազմի ժամանակ նշանակութիւն ունեն և մի շարք ուրիշ հանգամանքներ, օրինակ կուռող պետութիւնների ռազմական պաշարները, դրամական միջոցները, պարտքեր անելու յարմարութիւնները, զօրքերի տեղափոխութեան դիւրութիւնների աստիճանը և, որ պակաս դեր չէ կատարում, զինուորական մասերի ներդաշնակ գործողութիւնները, զօրքի ոգևորված լինելը և այլն։

Հետևեալ անգամ մենք կը խօսենք կուռող կողմերի ֆինանսների վիճակի մասին։

Ա. Բալանթար

ԳԱՀԱԺԱՌԱՆԳ ԱՐՔԱՅԱԶՆԻ ՏԿԱՐՈՒԹԻՒՆԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
9 հոկտեմբերի

Պետերբուրգ.—«Прав. Вѣстникъ»-ի մէջ տպված է բիւլլետէն Դահաժառանգ Արքայազնի առողջական դրութեան մասին. «Հոկտ. 2-ին Նորին Կայսերական Բարձրութիւն Դահաժառանգ Արքայազնի ձախ կողքից—պատահական ջարդուածք ստանալուց յետոյ — սկսեց արիւնոտութիւն, որի պատճառով տաքութիւնը սկսեց աստիճանաբար բարձրանալ, որ հոկտ. 6-ին հասաւ հետևեալ թուանշաններին. առաւօտեան 38,8°, ցերեկով 38,9°, երեկոյեան 39,0։ Հոկտ. 7-ին տաքութիւնն էր՝ առաւօտեան 38,4, ցերեկով 38,8, երեկոյեան 38,8։ Հոկտ. 8-ին՝ առ. 38,4, ցեր. 38,5, երեկ. 39,4։ Զարկերակը ամբողջ ժամանակ կանոնաւոր էր և 130—140 հարուած ունէր։ Հոկտ. 8-ին զարկերակը խփեց 144 անգամ. շնչառութիւնը կարգին է։ Ստորագրեցին պատուաւոր պալատական վիրաբոյժ պրոֆ. Ֆէօդորով, պալատական բժիշկ Բոտկին, պատուաւոր պալատ բժիշկ Օստրօգորսկի»։ Պալատի մինիստր բարոն Ֆրեդէրիկս։

(Պաշտօնական)։ Բիւլլետէն Դահաժառանգ Արքայազնի առողջական դրութեան մասին. «Հոկտ. 9-ին առ. ժամը 10-ից Նորին Կայսերական Բարձրութիւն Դահաժառանգ Արքայազնը երեկոյից զանգատվում էր ցաւերից ուռուցքի մէջ, որոնք կէս գիշերին իջան։ Ընդհանուր առմամբ գիշերը անցրեց աւելի հանգիստ նախկինից։ Առաւօտը տաքութիւնը 39,1 էր, զարկերակը 138»։

Երեկոյեան ժամը 7-ից նոր բիւլլետէն. «Նորին Կայսերական Բարձրութիւն Դահաժառանգը գիշերը հանգիստ անցրեց։ Ցաւերը չէ կային. շատ քնեց, կերաւ աւելի լաւ։ Տաքութիւնը՝ ցերեկով 39,0, երեկ. 39,5, զարկերակը ցերեկով 132, երեկոյեան 144»։

Սպալա.—Այսօր, շքախմբի անձերի և պաշտօնեաների միահամուռ ցանկութեամբ, եկեղեցում Թագաւոր Կայսրի թոյլտուութեամբ կատարվեց մարթանք Դահաժառանգ Արքայազնի առողջութեան համար։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
9 հոկտեմբերի

Պետերբուրգ.—Վերադարձաւ Սպալայից Սազոնովը։

Պետերբուրգ.—«Տեղեկատու Բիւրօն» լիազօրված է յայտնելու, որ լրագրական այն տեղեկութիւնը, թէ Թիւրքաց դեսպանին ուլտիմատում յանձնելու օրը Սոֆիայի ռուսաց դեսպան Նէկլիւդովը մասնակցում էր աւստրիական դեսպանատան հանդիսաւոր ճաշին, մերժացածին է։ Պատերազմ յայտարարելու օրից ոչ մէկը Սոֆիայում դիպլոմատիական ներկայացուցիչներից ոչ մի պաշտօնական ճաշ չէ տուել։

Բերլին.—Գերմանական Կարմիր Խաչը սանիտարական խմբեր է ուղարկում Թիւրքիա, Յունաստան և Բոլգարիա։

Լօնդօն.—Պատերազմի պատճառով նաւային երթևեկութիւնը Լիվերպուլ-Կօրֆու-Պատրաս-Սիրիա-Զմիւռնիա-Կ. Պոլիս-Սև ծով գծի վրա դադարաց։

Վիէննա.—Ֆինանսների մինիստրը պատգամաւորների պալատին ներկայացրեց բիւջէն։ Եկամուտները հաշուած են 3,137½ միլիոն, անցեալ տարվանից 152,4 միլիոնով աւելի. պետական պարտքը տրվելու է 72 միլիոն հերթական եկամուտներից։ Ապա մինիստրը ասաց. «Մենք հաստատ յոյս ունենք, և այս ես առանձնապէս շեշտում եմ, որ կայզրվի սահմանափակել Բալկանում կատարվող դէպքերը ներկայ պատերազմով»։ Նիստի վերջում սոցիալիստները հարցապնդեցին պահանջելով, որպէսզի կառավարութիւնը ամեն ջանք գործ դնէ պահպանելու Աւստրօ-Ունգարիայի քաղաքացիական խաղաղ ընաւորութիւնը։

Հռոմ.—«Կօր. դ'Իտալիան» մատնանշում է, որ Աւստրիան չափազանց շահագրգռված է բարի յարաբերութիւններ պահպանելու Իտալիայի հետ։

«Զիօրնալէ դ'Իտալիան» յիշեցնում է, որ Էրէնտալի և Տիտտոնիի տեսակցութեան ժամանակ էլ հաւատացնում էին, թէ Աւստրիան աչք չունի Բոսնիայի վրա, բայց մի քանի շաբաթից յետոյ տեղի ունեցաւ գրաւումը։ Լրագիրը համակրում է բալկանեան պաւօնների։

Թագաւորը արտաքին գործերի, ծովային և զինուորական մինիստրներին շնորհեց Անունցիատի շքեղան։

Պիզա.—Երէկ երեկոյեան եկաւ Բերլուրը կնոջ հետ։

Դիրին.—Եպաշնական լրագիրների հաղորդած տեղեկութիւնը այն մասին, որ մանչուրական միապետականները դիմել են Եպաշնիային խնդրելով միացնել Հարաւային Մանչուրիան, զայրոյթ է առաջ բերում հասարակական խաւերում։ Գաւառական խորհուրդը հասարակական տարբեր կազմակերպութիւնների հետ միջնորդում է կառավարութեան առաջ Եպաշնիայի նուաճողական նպատակներին դիմադրելու նպատակով աւելացնել զօրքերի թիւը և կազմել ժողովրդական յօժարակամ զօրախմբեր։

Թէհրան.—Սալար-ուդ-Դովլէի դէմ ուղարկվեց 400 զինուոր մի քանի թնդանօթներով։

Մերդաշդի մօտերը Սալար-ուդ-Դովլէի ձիաւորները բռնեցին արձակուրդ առած պարսկական մի կօզակի և հարց ու փորձի ենթարկեցին նրան քաղաքի դրութեան մասին։ Յետոյ Սալար-ուդ-Դովլէն շարժվեց դէպի հիւսիս և անցաւ Թէհրանի ճանապարհը Խէզարէկի մօտ։

Բիւջէով ծախքերը 1913 թ. հաշուված են 3,137½ միլիոն, անցեալ տարվանից 87,8 միլիոնով աւելի։ Եկամուտները ծախքերից աւելի են 0,3 միլիոնով։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

9 հոկտեմբերի

Կ. Պոլիս.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ հոկտ. 8-ին առաւօտեան օսմանեան նաւատորմը Կավարնի մօտ ափ իջեցրեց զօրաբաժին չորս թնդանօթներով։ Բոլգարները կրակ բացին։ Նաւատորմը պատասխանեց և կործանեց բոլգարական մի քանի պատերազմական նաւեր։ Զօրաբաժինը վերադարձաւ նաւերը առանց կորստի։ Յետոյ սկսվեց Վառնայի ռմբակոծութիւնը։ Բերդերից պատասխանեցին։ Ռմբակոծութիւնը շարունակվում է։

Օսմանեան գործակալութեան տեղեկութիւնների համաձայն՝ յոյները էլասոնի տակ կորցրել են 1500 սպանված։

Օսմանեան գործակալութիւնը հաղորդում է, որ կատաղի կռիւ է տեղի ունեցել բոլգարական զօրամասերի հետ Լարօվ-Պալանիա-Մլաչ գծի վրա։ Կատաղի կռիւը շարունակվում է Եւրոպական Թիւրքիայի ամբողջ սահմանային տարածութեամբ։ Սերբերը մեծ կորուստներ են ունեցել հոկտ. 8-ի ճակատամարտում Ժէլիզանի մօտերը, ոչ հեռու Տուչէվցէից և Սվիրցէից։ Այսօր հէնց միևնոյն տեղում վերսկսվել է կռիւ սերբերի կողմից մեծ թուով զօրքերի մասնակցութեամբ։

Պարսից դեսպանը դիմեց մեծ վեզիրին խնդրելով կանոնաւորել Թիւրք-պարսկական սահմանագլխի հողային հարցը։

Երէկ գնդապետ Իզզէթը ճառեց զինուորական թղթակիցների առաջ զինուորական մինիստրութեան մէջ։ Բոլորի թիւն է 27։ Նրանց մօտ լինելու են 3 օֆիցէր։ Թղթակիցները պատերազմի բեմը կը մեկնեն վաղը։

Պաշտօնապէս հաղորդվում է, որ բոլգարական սահմանագլխին Դօսպաղի շրջանում Թիւրքաց զօրամասը ձեռնարկեցով իբր յետ է նահանջում՝ առաջ քաշեց բոլգարական զօրքերին, յետոյ յարձակվեց նրանց վրա։ Թիւրքերը չարնել են բոլգարներին, պատճառելով դրանց զգալի կորուստներ և ձեռք ձգելով 2 թնդանօթ։

Այստեղ անվստահութիւնը դէպի Ռուսաստանը աճում է, առանձնապէս գերմանական և աւստրօ-ունգարական մամուլի կրակոտ յօդուածներից։ Տեղիս մամուլը մեղադրում է Ռուսաստանին բալկանեան պետութիւններին Թիւրքիայի դէմ հանելու մէջ, թէև կառավարութիւնը առայժմ աշխատում է զսպել մամուլի և պանսլամիստների ֆանատիկոսութիւնը։

Հրատարակվեց հրահանգ, որ արգելում է մամուլին յարձակումներ գործել օտարազգի մեծ պետութիւնների վրա։ Այդ հրահանգը երևաց գլխաւորապէս Ռուսաստանի հասցէին թշնամական յօդուածներ տպվելուց յետոյ։

Աթէնք.—Կումանչատոյի դիմացի բարձունքները գրաւվել են զօրքերից։ Յունական գնդերը գրաւել են Սեկօբունիօն բարձունքները անցնելով Պակի կամուրջով։

Յոյները էլասոնի մօտերը կորցրին 2 օֆիցէր և 15 զինուոր, վիրաւորված 65 զինուոր։ Տրիկալայի մօտերը ճակատամարտի մէջ սպանվեցին մի կապիտան, մի ունտեր-օֆիցէր և 10 զինուոր։ Հեծելազօրը կորցրեց 4 սպանված և 9 վիրաւոր։ Թիւրքերը, հեռա-

հալով Էլասօնիից, թողին գեներալ-շտաբի 1100 պլան։

Գեներալ Դանգլին հեռագրում է, որ յունական 2 բատալիոն շրջելով թշնամու թիկունքից յետ մղեց նրան և ամրացաւ Դէսեատիում։ Թիւրքերը նահանջեցին Սերվիի ուղղութեամբ։

—

Սօֆիա. — Բոլգարական թագաւորը, յունաց և սերբիական արքաները միմեանց հեռագիրներով աջողութիւն ցանկացան։

Հոկտ. 6-ին մակեդօնական զօրքերը, անցնելով սահմանը, տիրեցին կուից յետոյ Ցարէվո-Սելօյին և Զումային։ Բոդոպլի զօրքերը նոյնպէս ոտք են դրել թիւրքերի հողը։

Ագրիանուպոլիս դիմող զօրքերը յետ քշեցին թշնամուն և վերցրին Մուստաֆա-փաշան սուլիններով կուից յետոյ։

Բոլգարական զօրքերը ձեռք ձգեցին Մէխմիան՝ Բազլոգ գաւառում։

Բոլգարիան ճանաչեց Իտալիայի գերիշխանութիւնը Կիրէնաիկիում։

Բոլգարական գործակալութիւնը լիազօրութիւն ստացաւ մինիստր-նախագահից յայտնելու, որ երբէք նա չէ ասել այն խօսքերը ռուսաց դիպլոմատիայի հասցէին, որոնք տպված են «Нов. Время»-ի հոկտ. 4-ի համարում։

—

Բէլգրադ.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ բոլոր երեք զօրաբանակները աջողութեամբ առաջ են գնում։ Երկրորդ զօրաբանակը գրաւեց Ցարէվո Սելօն և Սուլթան-Թեփէ ամուր դիրքը։

Բեատվաց են բերել երեք վիրաւոր օֆիցերի և 50 զինուորի։

Պաշտօնապէս յայտնվում է, որ առաջին զօրաբանակի առաջաւոր գնդերը մօտեցել են Կումանովին։

Թագաւորը գեներալ Պուտնիկի հետ միասին աւտոմոբիլով գնաց Բիլեաչխանա և վերադարձաւ Բրանի բանակը։ Զօրքերը թագաւորին ընդունեցին մեծ ոգևորութեամբ։

Երրորդ զօրաբանակը և Իբարի զօրամասը յամառութեամբ կռիւ են մղում Նովօ-Բազարի մօտ 40,000 առնաուտների և 10 դումարտակ նիզամների դէմ, որոնք ունեն 4 բատարէա։ Յետ մղելով թշնամուն Պրիպօլացից, զօրքը մօտեցել է Փոքր Կոսովային։ Թշնամին փութանակի յետ է նահանջում։ Սերբերի կորուստները խոշոր են։ Առանձնապէս եռանդով գործում է արտիլերիան։ Առաջացող զօրախմբերը մօտեցել են Սէնիցային։ Եավորի բանակը գրաւել են սահմանակից բոլոր պահակատեղիները։

Առաջին զօրաբանակի առաջընթաց գնդերը գրաւեցին Կումանովոն։ Պեստր թագաւորը շրջագայելով զօրքերի մէջ հասաւ մինչև Պրիշուկ և վերադարձաւ Վրանին։

Եկաւ առաջին սանիտարական խումբը 293 վիրաւորներով։ Կայարանում դիմաւորեցին սկուպշչինան ամբողջ կազմով և տեղին ժողովուրդ։ «Կեցցէն երիտասարդներ» աղաղակներին վերջ չը կար։ Վիրաւորներին տեղաւորեցին գեղեցիկ կահաւորված հիւանդանոցներում։

Եկաւ սերբիական դեսպան Նենադովիչը։

Ստացված տեղեկութիւնների համաձայն՝ Նովօ-Բազարը և Սէնիցան գրաւել են սերբ զօրքերը։ Երկուստեք կորուստները շատ խոշոր են։

Պաշտօնապէս հաղորդվում է, որ երկրորդ զօրաբանակի առաջին գումարտակները գրաւեցին Կարագօվուն և Կօչանը, սպառնալով Օվչեպոլում բանակ դրած թիւրքաց զօրաբանակի աջ թեւին։

Երրորդ զօրաբանակի գնդերը գրաւել են Շենէշդոլի կիրճը և մօտեցել են Պրիշտինին։

Զօրքերի ոգևորութիւնը չէ պակասում։ Մթերքներն առատ են։ Եղանակը շատ լաւ է։

—

Նիշ.—Երկրորդ զօրաբանակը, որ գործում է Կիւստենդիլից, գրաւեց Ցարէվո Սելօն և Սուլթան-Թեփէ կոչուող ռազմադիրքերը։ Զօրաբանակը արշաւանքը շարունակում է դէպի Կրիվայա Պալանկա։

Պօդուէվան վերցնելու ժամանակ ձեռք ձգվեց շատ ռազմամթերք։

Բոլոր զօրաբանակները սերբիական սահմանից սկսել են արշաւանք։ Սերբերի կորուստները խոշոր են։

Սերբերը վերցրել են Կրիվայա-Պալանկան։

—

Պօղոսրիցա.—Հոկտեմբերի 8-ի առաւօտ Կրուշէվան եկան Նիկոլայ թագաւորի հետ տեսակցելու համար մեծ իշխանուհի Միլիցա Նիկոլայեվնան և պրինց Պրանց Բատենբերգսկին թագուհի Աննայի հետ։ Հիւրերը սրտագին ընդունվեցին թագաւորից։ Երաժշտախումբը նուագեց ռուսական ազգային օրհներգը։

—

Սերաէվօ.—2000 մահմեդական ոգևորութեամբ հրաժեշտ տուին պատերազմի դաշտը մեկնող 70 առնաուտներին։ Եղան ցնծագին բացագանչութիւններ ի պատիւ Պրանց-Յովսէփ կայսրի և սուլթանի։

—

Ռակիբ.—Ալբանները այստեղի օտարազգի ներկայացուցիչներին, բացի ռուսականից, յանձնեցին «Սև ձեռքի» լիգայի զեկուցագիրը, որի մէջ բողոքվում է բալկանեան պետութիւնների նուաճողական ձգտումների դէմ և յայտնվում է, թէ ալբանները չեն ճանաչի Հին Սերբիա և Էպիրոս անունները, ինչպէս նաև երկրի քաղաքական ու վարչական կազմը։

—

Վառնա.—Երէկ կէսօրին թիւրքաց նաւատորմը ռմբակոծեց Էվկսինօգրադի վանքի մօտ ընկած տեղը։ Ռմբակոծութիւնը ապարդիւն անցաւ։ Ափից չը պատասխանեցին։ Թիւրքաց նաւատորմը հեռացաւ Բուրգասի ուղղութեամբ։

—

Կրակով.—«Еаст»-ը լեհ հասարակութեանը և երիտասարդութեանը խորհուրդ է տալիս ներկայ փոփուկ բոպէին խոհեմ մնալ։

—

Բուխարեստ.—Բոլգարական Կավառնայի բնակիչները ռմբակոծութիւնից ազատանում են Բումինիա։

ԿԻԼԻԿԵԱՆ ԽԱԲԻԿՆԵՐ

—

Մերսին, 10 սեպտեմբեր

Եթէ Հայաստանի կացութիւնը ողբերգական է, Կիլիկիոյ կացութիւն ևս, դժբաղդաբար, վարդագոյն ըլլալէ հեռու է։

Ապագան ի՞նչ վերապահած է Թիւրքիոյ հայութեան համար, շատ ալ յայտնի չէ։ Եթէ յայտնի բան մը կայ—ըլլայ քաղաքական պատճառներով, ըլլայ Թիւրք կուսակցութեանց խառնակումներով, ըլլայ իսկ իրարու յաջորդող, ելեկտ Թիւրք մինիստրութեանց ու կառավարութեան աչքաթողութեամբ, թուլութեամբ և անկարողութեամբ—հայութիւնն առաւել քան երբէք անստոյգ և վտանգաւոր ապագայի մը դէմ յանդիման գտնուելն է, որմէն ելլելու և խուսափելու համար, դժբաղդաբար, ելքեր կը պակսին։

Ատեն մը՝ երբ կառավարական անարշի մը կը տիրապետէ. երբ կառավարական զեկը ձեռքերնին ունենալու կամ պահելու համար՝ Թիւրք կուսակցութիւնները ոչ մէկ անազնիւ և երկրակործան միջոցի առաջ կանգ կառնեն. երբ համայն Թիւրքիոյ սպառնացող մահու վտանգը յատակօրէն ըմբռնող հեռատես միտքեր կը պակսին. երբ անձնական և կուսակցական շահն ու փառքը ճշմարիտ և անձնազոհ հայրենասիրութեան ոգին խպառ սպաննած են,—բնական է խորհիլ, թէ երբէք հնար պիտի չըլլայ մեզ արդարութեան և իրաւանց յարգումի հման վրայ ապահովութիւն մը յուսալ։ Եւ որովհետև հայը միակ Թիւրքիաբնակ ժողովուրդն է, որ իր արդար պահանջները քշելու և արժեցնելու համար ներքին ուժ և արտաքին պաշտպաններ չունի, ան պիտի ըլլայ և մնայ, միջոցներու և եղանակներու լոկ տարբերութիւններով, այլոց և պետութեան սխալներուն, իսլամ անտեղիտալի այլամերժ սկզբանց և Թիւրք անուղղայ մտայնութեան զոհը, քաղաքական և ցեղային ընոյթ զգեցած ներկայ չարագործութեանց պէս, որ վտանգմըն են չէ թէ երկրին և պետութեան, այլ այդ պետութեան մէկ մասը եղող հայ քրիստոնէի դէմ։ Ի՞նչպէս կարել այդպէս ձեռք մը, որ միայն հայը կը կոտորէ, կը կողոպտէ, կը սպաննէ և կառանգէ։ Եւ յետոյ՝ որ մէկին հանիլ, մթթէ (թողունք Իթթիհադի կամ Իթիլաֆի անուշ բառակոյտերը) ամեն մէկ Թիւրք նոյն զգացումը չունի հայուն նկատմամբ, ինչ որ ուներ Միր-Մէհէ մը, Թաթար Օսման մը և այլն։

Այդ մտայնութեան դէմ կռուիլ որոշած է կառավարութիւնը։ Ապա թէ ոչ, հայութիւնը ոչինչ ունի սպասելիք ոչ սահմանադրութենէն, ոչ ապակեդրոնացումէն և ոչ իսկ նման օդային բարենորոգումներէն։

Ինչու զիրար խաբելու, աչքակապուկի այս խաղը, երբ դառն ուաչք ծակող իրականութիւնը ինքնին կը պոռայ։

Թող համարձակ ըսեն, որ հայն իր ծննդավայրն եղող այս երկրին մէջ ապրելու իրաւունքէն զրկուած է, ինչպէս Համիդին օրով, նոյն և այժմ։

Այս խոստովանութիւնը եթէ անողոք է և պաղ, բայց գէթ անկեղծ ըլլալու առաւելութիւն ունի։

... Բայց ինչ բանի մէջ անկեղծութիւն տեսանք։

Դիտող

ՅԱՆԿԷՆ ԴՈՒՐՍ

—

Ուստր, 27 սեպտեմբեր (Ն. տ.)

Զորս օրէն արդէն կը թեակոխենք հոկտեմբեր ամիսը, որ ժամանակ պիտի տօնուի հայ տպագրութեան 400-ամեակը, համաձայն Էջմիածնի Կեդր. Յանձնախմբի կարգադրութեան, որ յայտարարուեցաւ ամիսներ առաջ։

Համազգային բնաւորութիւն ու մեծ նշանակութիւն ունեցող այն յօբելեանը, որ անվիճելի կերպով պէտք էր հայ ազգին համակ ուշադրութեան ու մտածումին առարկան դառնար, կը ցաւինք ըսելու, թէ ամերիկահայ գաղթականութեան մէջ տակաւին ոչէ շարժում յառաջ չբերեց։

Ամիսներ առաջ Բոստոնի մէջ կատարուած յօբելեանական հանդէսը՝ նախաձեռնութեամբ Ամերիկահայ Ուսանողական Միութեան՝ չէ կարելի գոհացուցիչ նկատել և գործը վերջացած համարիլ, որովհետև հանդէսը դիպուածի մը արդիւնք էր աւելի, քան թէ նախապէս կատարուած պատրաստութեան մը, որուն մէջ մասնակցի դեր ունեցած ըլլային այս երկրին շատ մը հայ գաղութները։ Հանդէսէն գոյացած նիւթական արդիւնքն ալ արդէն այս կը հաստատէ, գումար մը, որ իր նպատակին ծառայեցնել անկարելի է, եթէ քանակը չբարձրացուի։

Էջմիածնի Յանձնախմբին կոչը, որ այդ սրբազան գործերուն զանգակներուն զիլ զոլանջիւններուն հետ միացած՝ հասաւ աշխարհի ամեն կողմը ցրուած հայութեան, կերևի թէ անարձագանգ պիտի մնայ ամերիկահայ գաղթականութեան մէջ, ոչ թէ անոր համար, որ այդպիսի կոչերու հանդէպ մեռելային անտարբերութիւն մը ցուցնելու վարժուած է, այլ նախաձեռնող մարմին մը գոյութիւն չունենալուն բացորոշ պատճառաւ։

Ամիսներ անցած են արդէն և յօբելեանի թուականը խիստ մօտալուտ, բայց այս գաղթականութեան մէջ ցարդ ոչ մի շարժում, ոչ մի փորձ երևան եկաւ։

Այս գործին հանդէպ ցոյց տրուած անտարբերութիւնը՝ ամերիկահայուն համար այնքան պատուաբեր բան չէ։ Ամերիկահայը, որ հանրային պարտականութիւններու առաջին նուիրուողն եղած է՝ բաղդատաբար իր թուին ու ապրած միջավայրին, որ ազգային հարցերու շուրջ գործօն դեր ու որոշ մասնակցութիւն ունեցած է, այս անգամ կերևի թէ բացառութիւն պիտի կազմէ հայ տպագրութեան 400-ամեակին նուիրուած տօնական հանդէսներուն մէջ իր չէզոքութեամբը, որուն պատասխանատուութիւնը կը ծանրանայ այս գաղթականութեան ինտելիկենտ դասակարգին վրայ։ Հասարակ ժողովուրդը, որ կեանքի առօրեայ պէտքերուն հետէ վազող ու մտահոգուող է շարունակ, չէր կրնար, ի հարկէ, իր աշխատութիւնները նուիրել տօնելու հայ տպագրութեան յօբելեանը, որքան ալ որ բաղձացող մը ըլլար այդ բանին։

Գործին նախաձեռնութիւնը պէտք էր ստանձնէին անոնք, որ առաջնորդի դեր առած վրանին՝ հանրային շարժումներու մէջ ուղղութիւն ցոյց կուտան հասարակ մահկանացուներուն և հրամաններ կարձակեն։ Բայց այս դասակարգին պատկանողները չզգացին իրենց պարտականութիւնը, որով ամերիկահայ գաղթականութիւնը զրկուած պիտի մնայ գործօն դեր ունենալէ յառաջիկայ հոկտեմբերին տեղի ունենալիք հանդէսներուն մէջ։

Յանկէն դուրս հաշուեցէք, ուրեմն, ամերիկահայը։ Հայ տպագրութեան 400 ամեակին նուիրուած հանդէսներ հոս հաղիւ թէ կատարուին ու այդ նպատակին համար հաղիւ թէ նուիրատուութիւններ ըլլան։

Մաղաք Գ. Պէրպէրեան

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԵՐԻ ՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԸ *)

(Մի էջ Դաշնակցութիւն կուսակցութեան աւանդական քաղաքականութիւնից)

III

Անմիջական ու գործնական հետևանքը, որ բաժին ընկաւ Դաշնակցութեան՝ Թիւրքական սահմանադրութիւնից ի վեր (1908 թ.), դա այն է, որ նա ազատվեց հալածանքի և ստորերկրեայ աշխատանքի վիճակից։ Մինչ այդ նա անկեղծ էր, ցրված ու սոսկ գրուպպային, այժմ դարձաւ հրապարակական լեզու կազմակերպութիւն, խմբակցված ֆունկցիաներով և մասսայական ստուար բանակով։ Ստեղծվել էր նրա համար խոհերի, ջանքերի ու ձգտումների, պաննների ու գործողութիւնների նոր, անհամեմատ դիւրին ու յարմար մթնոլորտ։

Նման փոփոխութիւններ ունեցաւ Դաշնակցութիւնը իր գործունէութեան պերիպետիաների և արտայայտութեան եղանակների մէջ։

Տարակոյս չը կայ, որ այդ կուսակցութիւնը՝ Թիւրքահայ հողի վրա և Թիւրքահայ ժողովրդի համար մի յեղափոխական կուսակցութիւն էր իր պատմական զենեզիսով, իր ծագման բէլ, ազդակներով, իր առաջադրած նպատակներով և սրանց հասնելու (կուլ) մեթոդներով։ Դուրս կորզել համիդեան բէժիմի արիւնաթաթախ ճանկերից մի բուռն, անխնայ կոտորվող ժողովրդի և ապահովել նրա ֆիզիքական կեանքն ու գոյքը, կուլտուրական ազատ գարգացման ուղիները,—այդպէս էր հնչում անցեալում Սասունի բարձունքներից երբեմնի գաղափարական կուսակցութեան կոթեգօրիկ, խրոխտ լոզունգը։

Որպէսզի Դաշնակցութիւնը թողնէր իր այդ վաղեմի ծրագրային նպատակը և յեղափոխական կուլ պատֆօրմը, պէտք է Թիւրքիայի քաղաքական մթնոլորտը այնպէս յեղաշրջվէր, օսմանեան պետութեան նախկին յարաբերութիւնները մի այնպիսի նորակերպ դասաւորութիւն ստանային՝ յատկապէս հպատակ ժողովուրդների հարցում, որ փաստապէս իրականային կուսակցութեան ծրագրի՝ եթէ աւելին չասենք՝ գէթ էլեմենտար պահանջները, ադամորդու հասարակ ֆիզիքական գոյութեան ըստինքեան հասկանալի պայմանները։ Արդեօք նոր, «երիտասարդացած» Թիւրքիան՝ տապալելով նախկին կամայական պետութեան սխեմը, տապալեց նաև հին բէժիմի ծայրագաւառների քաղաքականութիւնը հիմովին։ Այս շեշտակի հարցի բացասական պատասխանը կը տան արդէն իրանք ընթերցողները առանց վարանման, եթէ չեն մոռացել չորս տարվայ ընթացքում սիստեմատիկ մղվող հարստահարութիւնները, մասնակի կոտորածները և ոչ սակաւ կրկնվող մասսայական ջարդերը (իմա Ադանան, Կիլիկիան)։ Փոքր-Ասիայում, դժոխային բռնութիւնները Մակեդոնիայում և այլն։ Նոյն ընթերցողներին խնդրում ենք յատկապէս՝ այս կապակցութեան մէջ շարայարվող կէտերի տրամաբանական յաջորդականութեան հետևել ամենայն ուշադրութեամբ՝ սխալ հասկանալու որևէ Թիւրքիացութիւնից խուսափելու համար։

Հին բէժիմի օրով Թիւրքահայ ժողովուրդը նոյնքան էր վտանգված իր գոյութեան, ապրուստի տարբերան պայմանների մէջ, որքան վտանգված էր Դաշնակցութիւնը իր գործունէութեան բոլոր սահմաններում։ Հաւասարապէս անխախանձելի էր հայ ժողովրդի և հայ կուսակցութեան վիճակը համիդեան կիսալուսնեակի վառվռուն շրջանում։

Մարեցին հին ջահերը. հորիզոնում պարզվեցին նոր ասպետներ։ Երիտասարդ-Թիւրքերի նացիոնալիստական էնթուզիազմը իրականացրեց Բոսֆորի ափերին եւրոպական սահմանադրութեան անդամալուծված բեկորներ, նախկին կամայակարգին փոխարինեց նոր իրաւակարգը։

Սակայն նոյն սահմանադրութիւնը եկաւ պատմական խաղերի դառն իրօնիայով անջրպետ փորելու հայ ժողովրդի և Դաշնակցութեան—որպէս ազգային հատուածի եւ քաղաքական կուսակցութեան — նախկին վիճակների միջև։ քակվեց վաղեմի տխուր ներդաշնակութիւնը՝ երկու ընդդիմադիր մեծութիւնների տարբերակ մօմենտների միջև. ստեղծվեց մի ակնյայտնի հակառակ դրութիւն՝ մի կողմից հայ ժողովրդի գոյութեան պայմանների, տնտեսական կենսագրի, իսկ միւս կողմից Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպական գոյութեան և հրապարակական իրաւունքների միջև։

Մենք հանդիսատես եղանք մի վերին աստիճանի ուշագրաւ, նոյնքան և տխուր պատկերի։

Այն, ինչ Թիւրքահայ ժողովուրդը իրաւամբ սպասում էր սահմանադրութիւնից—թող այդ սպասածը լինի մի չափազանց ողբալի մինիմում—չը ստացաւ, չիրականացվեց։ Այն, ինչ Դաշնակցութիւնը, որպէս մէկը այլ համաթիւրքական քաղաքական կուսակցութիւններից, պիտի սպասէր քաղաքացիական ազատութիւններ աւետող սահմանադրութիւնից, ստացաւ, իրականացրեց։ Ապահովվեցին Դաշնակցութեան ծաւալվող գործունէութեան բոլոր ֆունկցիաներն ու ձեռնարկները՝ ազատ ժողովներ, օրգաններ, ընտրական պայքար, կրթական-կուլտուրական համապիւռ գործունէութեան անկաշկանդ իրաւունքներ և այլն։ Թիւրքահայ

*) Տես «Մշակ» № 224.

ժողովուրդը, en masse, որպէս ազգային հատուած, ընդհակառակը, չը կրնայ սիստեմային փոփոխութիւններ իր հասարակական օրգանիզմի մէջ. նա շարունակեց՝ նախկին խարականութեան սկզբունքով, դատապարտած մնալ արհամարհած քաղաքացիութեան վիճակի մէջ. նա, որ դուցէ աւելի, քան որեւէ համաթիւրքական ժողովուրդ կարիք ունէր զէնք կրելու իր շրջապատի վանդալական յարձակումների առաջ ինքն իրան պաշտպանելու համար, չը ստացաւ այդ տարրական իրաւունքը։ Քիւրդական անզուստ արշաւանքները մի կողմից, պետական հարկահանների կեղեքումները միւս կողմից՝ հիմնապէս պահպանեցին նախկին աւարառու քաղաքականութեան բնաւորութիւնը։

Ահա այդ ուշագրաւ պատկերը։

Սա իրերի ստատիկ դրութիւնն էր, որ մենք ընդհանուր շրջիններով ուրուագծեցինք այստեղ։

Որպէսզի հնարաւոր լինի պատկերը իր լրիւ մակարդակով ցուցադրել, անհրաժեշտ է հեռու վանել կիսածածկ վարագոյրը, ուստի անցնենք իրերի նորակերպ դասաւորութեան դինամիկ մոմենտների վերլուծութեան։

Intimus

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

—o—

ԴՐՈՒԹԻՆԸ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը սեպտ. 23-ին հեռագիր է ստացել Սղերդից, որով հաղորդվում է, որ այդ շրջանում տակաւին շարունակում է սարսափի կօշմարը ծանրացած մնալ հայ ազգաբնակութեան վրայ։

—

Բիթլիսի և Վանի նորընտիր վալիներն արդէն հասել են իրանց պաշտօնատեղիները և գործի ձեռնարկել։

—

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, Բալուի առաջնորդարանից ստացված հաղորդագրութեան համաձայն—նոյնպիսի տեղեկութիւններ ստացել են և պօլսահայ թերթերն իրանց Բալուի շրջանի թղթակիցներից—լրագրութեանն է յանձնել Բալուի և շրջակայքի մէջ գործվող ոճիրների և յարձակումների տեղեկութիւններ։ Այդ հաղորդագրութեան մէջ ասված է, թէ հայերն այլ ևս չը կարողանալով տակալ գործադրվող սիստեմատիկ բռնութիւններին՝ վճռել են դաղթել Ամերիկա։

Բ. Դուռը, ի հերքումն պատրիարքարանի ստացած այդ տեղեկութիւնների, սեպտ. 19-ին Կ. Պոլսի թիւրքերէն լրագիրներում հրատարակել է մի գրութիւն, ըստ թիւրքական աւանդական սովորութեան աշխատելով ցոյց տալ, որ յիշեալ շրջանում, ինչպէս հաղորդում է Դիարբէքիրի կուսակալը պաշտօնապէս, կեանքն ընթանում է խաղաղ և նորմալ պայմաններում։

Եւ սակայն իրականութիւնը գալիս է բոլորովին այլ բան ասելու, քան Բ. Դուռը պնդում է։ Դեռ սեպտ. 18-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը պաշտօնական թակիրը է ներկայացրել, բողոքելով որ Բալուի շրջանի Հաւաբի վանքի հողերը գրաւված են Իբրահիմ և Թայֆուր բէյերի և սրանց ծառաների միջոցով։

—

Վանից Կ. Պոլսի ազգ. պատրիարքարանին սեպտ. 21-ից հեռագրում են, թէ աւազակ Մահմէն Կարգիանի շրջանակում գիշերը պաշարելով՝ անդադար հրացանաձգութիւն է անում։ Ժողովուրդը սարսափի մէջ է։ Վանից զօրք է ուղարկվել յիշեալ շրջանակը՝ ազգաբնակութեան պաշտպանութեան համար։ Աւազակները, լսելով զօրքի գալստեան մասին, փախուստի են դիմել։ Տեղի է ունենում հետապնդումն։ Տեղական ժողովուրդը ասում է, թէ զինուորական հետապնդումը դադարելուց յետոյ աւազակները նորից գլուխ կը բարձրացնեն և աւելի սանձարձակ կը դառնան, եթէ կառավարական զօրքերը երկրի այդ ցեղերին ձեռք ձգելու և ենպատճառ պատժելու չաշխատեն։ Այդ շրջանում քիւրդերն արդէն այնքան յանդուգն են դարձել, որ վերջերս ոգիմցիների պաշտպանութեան համար գնացած զօրքի վրա են յարձակվել և նրանից անդամ մի քանիսին սպանել։

ԻՆՉ ՊԷՏՔ Է ԱՆԵԼ

—

Այս հարցը կախված է ամեն մի հայի շրթունքից, այս հարցով զբաղված է ամեն հայ, որտեղ էլ գտնվելիս լինի նա։

Այն մեծ յոյսերը, որ լաւատեսօրէն դրված էին Թիւրքի սահմանադրական կառավարութեան վրա, ի դերև ելան։

Թիւրքիայի հայը դարձեալ գտնվում է Ջարդերի նախօրեակին։

Եթէ առաջ Թիւրքիայի վերանորոգութեան հաւատացողներ կային, այսօր այդ հաւատքն այլևս չը կայ։

«Ի՞նչ պէտք է անել» հարցնում են ամենքը վշտով ու տարակուսանքով բռնված։

Զը պէտք է մոռանալ, որ սա առաջին անգամը չէ և մենք անցեալում շատ բան ենք արել,—մեր բողոքը դրել ենք Պարիզի վեհաժողովի սեղանի վրա, նա արծարծվել է Սան-Ստեֆանօյում և Բերլինում, ստեղծելով 61-րդ յօդուածը. ժամանակ-անժամանակ դիմել ենք այս կամ այն պետութեանը, այս կամ այն կոնդրէսին լացով ու աղաչանքով, ցոյցեր ենք կազմակերպել. պետիցիան ձեռներում խմբովին դիմել ենք դէպի Բ. Դուռը, գրել ենք Աշըդեանին, որպէս ապիկար մի պատրիարքի, և նրա տեղ դահ ենք բարձրացրել երկաթէ պատրիարք Իզմիրլեանին. եկեղեցիների խաչերն ու գմբէթները զարդարել ենք սև շղարշով՝ որպէս նշան համազգային սգի ու բողոքի. գրաւել ենք Բանկ-Օթոմանը, պարտիզանական արշաւանքներ կազմակերպել և որպէս թագ ու պսակ այս բոլորի՝ հարիւր հազարաւոր զոհեր ենք տուել...

Մենք ասելով՝ չը պէտք է հասկանալ լինի, ձեզ կամ մի ուրիշին։ Մենք եմ ասում նրա համար, որ մինչև այսօր ինչ որ արվել է և ով էլ արել է, միշտ կատարվել է հայ ազգի անունից, որի անբաժան անդամներից մէկն էլ մենք ենք—ես, դու և միւսը։

Այժմ, երբ օսմանեան սահմանադրական կառավարութիւնը յանձին մեծ մարդասպանի սիրեցեալ խուժանի՝ իր վայրագութիւններով կրկին ստիպում է մեզ մտածելու, թէ «ինչ պէտք է անել», մենք ստիպված ենք մեր արածների և ստացած հետևանքի հաշուեկշիռը կազմելու, իմանալու համար թէ մինչև այսօր մեր արածները կամ՝ աւելի ճիշդ ասած՝ մեր անունից արվածները ինչ շահ կամ վնաս են բերել մեզ։

Մամուլի բողոքը Թիւրքահայաստանում տեղի ունեցած վայրագութիւնների ու բռնութիւնների դէմ շատ հասկանալի է։ Երևի դէպքերի թարմ տպաւորութեան և մամուլի բուռն բողոքի հետևանքն է Թիֆլիսում գումարված ժողովը, որին ուղում են հետևել նաև միւս հայաբնակ կենտրոնները, նոյնիսկ գաղութները։

Մեզ յայտնի է միայն Թիֆլիսի ժողովի որոշումը—դիմել Վեհ. Կաթողիկոսին, որ Նորին Սրբութիւնը յանուն ազգի խնդրէ Թագաւոր Կայսրից Թիւրքահայաստանի խժդժութիւնները դադարեցնելու համար։

Մենք պէտք է համոզված լինենք, որ հակառակ մի քանի հայակեր անհատների՝ Ռուսաստանը իր ժողովրդով դէմ է եղել և դէմ կը լինի նման ջարդերին ու թալաններին։

Ուրեմն մեր դիմումը չէ, որ պէտք է ցոյց տայ Կայսեր, նրա կառավարութեանն ու ժողովրդին, թէ ինչ պէտք է անեն։

Ամեն մի պետութիւն կանգնած է որոշ քաղաքական արգելքների առաջ։ Քաղաքական հոտառութիւնից իսպառ զուրկ պէտք է լինենք, որ այդ բանը չը հասկանանք։

Լրագրական տեղեկութիւններից յայտնի է, որ Պօլսոյ դեսպաններից մի քանիսը, որպէս և ռուսաց դեսպանը, այդ մտքով առաջադրութիւն են արել օսմ. կառավարութեան։

Ցարդելով Վեհ. Կաթողիկոսի խնդիրքը, Թագաւոր Կայսրը թերևս բարեհաճի պատուիրելու իր դեսպանին, որ նա պահանջի օսմ. կառավարութիւնից դադարեցնելու ջարդերն ու հալածանքները։

Այսքանս միայն, եթէ պետութեան քաղաքականութիւնը աւելին չէ թոյլատրում։

Իսկ այդպիսի առաջադրութիւններ, պահանջներ շատ են եղել տարիների ընթացքում և մնացել առանց հետևանքի։

Թիւրքիան շարունակել է իր գործը՝ ջարդել է, թալանել, հալածել, լաւ գնահատելով եւրոպական պետութիւնների վրա իշխող ծանր կացութիւնը։

Պահանջ այն ձևով, ինչ ձևով արեցին վերջերքում բալկանեան փոքր պետութիւնները՝ ինքն ըստ ինքեան հասկանալի է։

Այդ ձևի վճռական պահանջից կամ դիւանագէտների լեզուով ասենք՝ ուլտիմատումից յետոյ էլ ուրիշ բան չէ մնում անել, եթէ ոչ՝ սրերը մերկացնել։

«Որ ոչ լուիցէ ունկամբ, լուիցէ թիկամբ»։

Արդ, Ռուսաստանը պատրաստ է նման վճռական պահանջ դնելու։ Նրա քաղաքականութիւնը կամ արտաքին քաղաքական հանգամանքները թոյլատրում են նրան՝ հակառակ դիպուածում՝ իր պահանջը սրի ոյժով կատարել տալու։

Եթէ այո, այն ժամանակ մեր խնդիրքը Թագաւոր Կայսեր աւելորդ է, որովհետև մենք չենք, որ թելադրութիւններ պիտի անենք։ Իսկ եթէ ոչ՝ այն ժամանակ մեր դիմումն ոչ մի նպատակ չունենալով հանդերձ կարող է ծանր հետևանքներ ունենալ, որովհետև տասնեակ տարիների պատմութիւնից գիտենք, որ ամեն մի նման դիմումին Թիւրքիան պատասխանել է ջարդերով։

«Հօրիզօնի» աշխատակիցը սրբազան Օրմանեանի դատը պաշտպանողների հայկէին ինչ որ գոհիկ ակնարկներ անելուց յետոյ՝ հարցնում է, թէ ինչու նրանք ձայն չեն հանում, չեն աղմկում, բողոքում։

Մենք կասենք՝ բարձրացրած աղմուկն իսկ շատ է։ Աղմուկներով չէ, որ քաղաքական հարցեր են լուծվում։

«Հօրիզօնի» աշխատակցի նման թեթև-սոլիկների աղմուկը մեզ տուաց 1895 թ-ին երեք հարիւր հազարի չափ կոտորած, Պօլսում մօտ 20,000, նոյնքան էլ Աղանայում։

Հայի ամենատգեղ սովորութիւնն է ուղտի չափ պռոալ, կանչել, լուի չափ գործ չը կատարել։

Ցաւալի է, որ մենք դեռ խելքի չենք գալիս, դեռ հետևում ենք այդ վարձկան աղմկարարներին, որոնք ոչ մի կապ չունեն Թիւրքիայում տառապող ժողովրդի հետ, որոնց արհեստն է ջուրը պղտորել, առատ որս ունենալու համար։

Որքան ծանր է կացութիւնը, այնքան քիչ պէտք է պռոալ, կանչել և բիւրապատիկ աւելի լուռ և զգոյշ գործ կատարել։

Այլապէս աչքը շինելու տեղ ունքն էլ կը փչացնենք։

Ա. Ե. Մուրադեան

Սամարղանդ, 30 սեպտեմբերի

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, 2 հոկտեմբերի

Վաթսուն տարի անցել է այն օրից, երբ Թաւրիզում հիմնվեց Արամեան դպրոցը Բերդաթաղում Սաթունեան սրբազանի և աջակիցների ջանքերով։ Արամեան ուսումնարանն իր գոյութեան ընթացքում զնահատելի ծառայութիւն է մատուցել Թաւրիզի հայերին՝ տալով պիտանի քաղաքացիներ։ Եթէ կան և եղել են փոքր ի շատ չափաւոր կրթութիւն ստացածներ մեր վաճառականների, արհեստաւորների ու այլ պաշտօնեաների շրջանում, դրանք պարտական են Արամեան դպրոցին։ Տարաբաղդաբար վերջին տասն տարվայ ժամանակամիջոցին դպրոցի համեստ դրամագլուխը կորուստի մատնվեց այն պատճառով գլխաւորապէս, որ առատաբան վաթսար տարիների հետևանքով մնանկացան այնպիսի վաճառականական տներ, որոնց մօտ էին գտնվում ուսումնարանի գումարները, ուստի և ուսումնարանի նիւթականը դատապարտվեց նուազման վիճակի ու անապահովութեան։

Այս մի երկու տարի է, որ մի խումբ կրթասէր պարոնների մէջ միտք էր յղացվել կատարել դպրոցի 60-ամեայ յօբելեանը, և այդ առիթով ապահովել դպրոցի նիւթական դրութիւնը՝ վստահելով առաւելապէս նոյն դպրոցում սովորած նախկին աշակերտների կրկնակի ջանքերին և այն ամենայն մարդասէր ու ուսումնասէր հայերի վրա, որոնց համար սիրելի է ու իրանց սրտին մտիկ Արամեան դպրոցի գոյութիւնը և ընդհանրապէս Արարատեանի հայ ժողովրդի կրթութիւնը։

Արդէն յղացված բարենպատակ միտքը կարծես մարմին է առնում կամ աւելի ճիշդը՝ խօսքից գործի է անցնում Արամեան ուսումնարանի ներկայ հոգաբարձութեան օրով և նրա նախաձեռնութեամբ։

Հոգաբարձութեան անդամ և ռուսահպատակ հայերի վաճառականապետ Զաքարիա աղա Նազարբէկեան մի շրջաբերականով 30 հոգու չափ վաճառական ու գիտակից անձնաւորութեանց խորհրդակցական ժողովի էր հրաւիրել իր տանը սեպտեմբերի 30-ին, ուր ներկայ էին նաև հոգաբարձութեան անդամներից։ Զաքարիա աղա Նազարբէկեան ժողովի նպատակը բացատրելուց յետոյ, բժիշկ Ասլանեանի նախագահութեամբ ժողովը կատարեց կարևոր խորհրդակցութիւններ յօբելեանի պատշաճ հանդիսակատարութեան և նրա յարակից պարագաների մասին, և իր միջից ընտրեց 8 հոգուց բաղկացած մի յօբելեանական յանձնաժողով հետևեալ անձնաւորութիւններից։

Զաք. Նազարբէկեան, բժիշկ Ասլանեան, Թադէոս Աֆթանդիլեան, Արսէն Աֆթանդիլեան, Մեսրոպ Տէր-Յակոբեան, Յովհաննէս Զանեան, Զիբրայիլ Բուդաղեան և Սըմբատ Մելիք-Սարգսեան։ Յանձնախմբի գործունէութեանը կաջակցեն նաև դպրոցի հոգաբարձուներն և տեսուչը, ընդ նախագահութեամբ թեմիս առաջնորդի։

Աւելորդ չէ լինի շեշտել, որ Արամեան դպրոցն իր անցեալ գործունէութեամբ ու օգտակար ծառայութեամբ արժանի է ամենայն համակրանքի ու քաջալերութեան հայ հասարակութեան, «Մշակի» և ընդհանրապէս մամուլի կողմից։ Յանձնաժողովի շնորհալի կազմը անկասկած երաշխաւորութիւն է գործի աջողութեան, և հաւատում ենք, որ մանաւանդ ձեռներէց պարսկաստանցիները, լինեն երկրում թէ օտարութեան մէջ, ձեռնտու կը հանդիսանան խնամքով պահպանելու կրթութեան տաճարը՝ ի բարեկրթութիւն Ատրպատականի մանկանց։

Հայկազուն

Ց. Գ.—Մի շաբաթվայ ընթացքում պարսիկ կառավարութեան կողմից ձերբակալվեցին և յանձնվեցին ռուսաց 3 դաշնակցական հայ տղաներ։ Գործի էութիւնը յայտնի չէ. միայն ձերբակալվածներից մինի վրա, Լեոն անունով, ասում են՝ կասկած ունի կառավարութիւնը, որ նա եղած լինի գեներալ Աւարսկիի սերբօրիսարը։

Նոյնը

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԿՈՎԿԱՍԻ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

—

«Журналъ Лѣсоводства»-ի փետրվար-մարտ ամիսների պրակում տպագրված է մի յօդուած «Անտառային հարստութիւնները Կովկասում» վերնագրով։ Քաղում եմ նրանից մի քանի տեղեկութիւններ «Մշակի» ընթերցողների համար։

Կովկասը իր բոլոր տարածութեան մէջ բռնում է 412,310 քառակուսի վերստ տեղ։ Դրանցից, հեղինակի հաշուով, 40%-ը հերկվում-մշակվում է, 15%-ը ներկայացնում են արօտատեղիներ, 15%-ը ծածկված են անտառներով, իսկ 30%-ը օգտվելու համար անյարմար վայրեր են (ապառաժներ, սառուցներ, անջրդի տեղեր և այլն)։

Կովկասի ազգաբնակութիւնը, յենվելով 1908 թուականի տեղեկութիւնների վրա, հեղինակը համարում է 10.908,400 հոգի, որոնցից 5.738,400-ը արու և 5.170,000-ը կինմարդիկ։ Այդ գումարից ռուսները կազմում են 34,5%, թուրք տարրերը՝ 20,2%, վրացի ազգերը՝ 14,5%, հայերը՝ 12%, լեռնականները՝ 11,7%, մնացած ազգութիւնները՝ 7,1%։ Եթէ 10.908,400 թուից վերցնենք 12%, կը գտնենք, որ հայերի թիւը 1908 թ. Կովկասում էր՝ 1.309,000, հետևաբար ներկայ օրերում նրանց թիւը պէտք է հաշուել մօտ 1.400,000։

Անտառների հրապարակը ամբողջ Կովկասում 6.840,375 դեսեատին է։ Դրանցից հաշվվում է Բաքուի նահանգում 324,000 դեսեատին, Գանձակի նահ. 462,000 դես., Թիֆլիսի նահ. 1.263,000 դես., Երևանի նահ. 87,000 դես., Կարսի նահ. 115,000 դես., Քութայիսի նահ. 859,000 և այլն։

Ստավրօպոլի նահանգից յետոյ՝ ամենաքիչ անտառները նահանգի հրապարակի հետ համեմատած, գտնվում են Երևանի նահանգում, ուր անտառները կազմում են նահանգի հրապարակի 3,4%-ը։ Համեմատաբար շատ են և անտառները Բաքուի նահանգում (9,1%), Կարսի (9,7%), Գանձակի (11,5%), Թիֆլիսի (33,8%)։ Անտառոտ են համարվում Կովկասում՝ Սուխումի շրջանը (77,4%), Զերնօմորեան շրջ. (67%), Բաթումի շրջ. (60,9%) և այլն։ Ստավրօպոլի նահանգը գրեթէ զուրկ է անտառներից (0,6%)։

Կովկասեան անտառներից 3.127,000 դես. պատկանում է գանձարանին, 3.713,000 դեսեատինը մասնաւոր անձանց կամ հասարակական հաստատութիւններին։ Մասնաւորապէս գանձարանը ունի անտառներ Թիֆլիսի նահանգում 482,000 դես., Բաքուի նահ. 220,000 դես., Գանձակի նահ. 397,000 դես., Երևանի նահ. 72,000 դես., Կարսի շրջանում 115,000 դես. և այլն։

Կովկասում ծառերի տեսակները համեմատած Ռուսաստանի ծառերի տեսակների հետ, բազմազան են։ Ծառերի մէջ ամենատարածվածը Կովկասում հաճարին է, ապա կաղնին, բոխին, սօճին, հացին, լորին և այլն։

Անտառները գլխաւորապէս բուսնում են լեռների բարձունքներում և նրանք շատ թոյլ կերպով են շահագործվում։ Անտառի առատությունը գրեթէ կանգ է առած։ Աճուրդներին, որոնք նշանակվում են գանձարանի կողմից, յաճախողներ շատ քիչ են ներկայանում։ Պատճառները, հեղինակի կարծիքով, երկրի անկուլտուրականութիւնն է, ժողովրդի աղքատութիւնը, ճանապարհների բացակայութիւնը, իսկ գլխաւոր պատճառը ճանապարհների բացակայութիւնը։ Երկրում ածուցարաններ շատ քիչ կան։ Փայտ շատ քիչ է գործածվում և հանքերին շահագործման ժամանակ, որովհետև նա յաճախ փոխարինվում է քարածուխով, ինչպէս օր. Գանձակի նահանգում։ Երկրում երկաթուղիների ցանցը շատ նօսր է. նրանց ամբողջ տարածութիւնը հասնում է 3532 վերստի։ Շատ քիչ են և խճուղիները։ Գանձարանը 1908 թ. ընդհանուր եկամուտ է ունեցել իր անտառներից ընդամենը 843,000, իսկ ծախս՝ 602,000 ռուբլի։

Անտառային գործը երկրում շատ-քիչ կենդանացնելու համար անհրաժեշտ է՝ կըրճատել անտառապետութիւնների սահմանները, բազմացնելով նրանց թիւը. յատակագծել անտառները, ջնջել գոյութիւն ունեցող սերվիտուտները, այսինքն անտառներից ուրիշ օգտվողների իրաւունքները կանոնաւորել և վերջապէս գանձարանի կալուածքների սահմանները ընդմիշտ որոշել, իսկ դա կարելի է իրագործել, հեղինակի կարծիքով, երբ հողային խնդիրը լուծված կը լինի Կովկասում։

Ա. Ղուլեան

Մոսկվա

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Զայն Սղնախից

Սղնախ, 28 սեպտ.

Սղնախում կազմակերպվեց փոխադրական վարկի ընկերութիւն, որը իր գործունէութիւնը սկսեց ներկայ տարվայ մայիսի 6-ից։ Այդ ընկերութեան սեպտեմբերի 1-ին հրատարակած բալանսից երևում է, որ բանկն ունի այժմ 294 անդամ։ Հաշուեկշիռը ներկայացնում է հետևեալը. ակտիվ՝ դրամարկղ—3311 ր. 14 կ., գրաւ դրած մուրհակներ—34,426 ր., բանկի շարժական գոյքը—263 ր. 95 կ., ծախս վերադառնալի՝ 448 ր. 10 կ., ընթացիկ հաշիներ—1018 ր. 70 կ., անցողական գումար—20 ր., ընդամենը—41,137 ր. 93 կ.։ Պասսիվ՝ 20 տոկոս 294 անդամից—18,590 ր., պահելու համար մտցրած գումար՝ ժամանակային ընկերութեան անդամներից—6700 ր., օտար անձնաւորութիւններից—4700 ր., առանց ժամանակի ընթացիկ հաշուով անդամներից—2466 ր. 20 կ., ուրիշներից—655 ր., ընթացիկ հաշուի պայմանով օտարներից—14,521 ր. 20 կ., կնտրոլտատրս—2921 ր. 40 կ., անցողական գումարներ—3250 ր. 40 կ., միւս տարվայ համար անցնելի տոկոս—76 ր. 24 կ., տոկոսներ և ուրիշ օգուտներ օպերացիոներից 1778 ր. 69 կ., ընդամենը 41,137 ր. 73 կ.։

Սղնախում սկսեց հրատարակվել «Նմա Կախէթիա» վրացերէն լրագիրը փոքր ծաւալով։ Լրագիրը լոյս է տեսնելու ամեն օր, սակայն այժմ հրատարակվում է շաբաթը մի անգամ։ Լոյս են տեսել 1, 2 համարները։ Առաջնորդող յօդուածի մէջ լրագիրը ասում է, որ ինքը ունի համհատ դեր կատարելու և հեռու է խորը ծրագիրներից։ Նրա նպատակն է՝ ծառայել ժողովրդի բարեկեցութեան օգտին, գլխաւորապէս գիւղացիներին, մանր վաճառականների և արհեստաւորներին։

Նա ընթերցողներ է ուզում ձեռք բերել ժողովրդի ներքին խաւերից, որոնք հնարաւորութիւն չեն ունեցել ստանալ ստորին կրթութիւն և նպաստել նրանց լուսաւորութեան։ Տարեկան բաժանորդավճարն է՝ Սղընախում—1 ր. 40 կ., դուրսը—2 ր. 20 կ.։

N. N.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Այսօր, երեկոյեան ժամը 7-ին, Բօրսայի դահլիճում (Մանթաշեան առևտրական դպրոց, Բեհբութեան փող.) նշանակված է խորհրդակցական ժողով, ուր պէտք է քննվի ամսոյս 13-ին էջմիածնում կայանալիք յօբելեանական հանդէսին Թիֆլիսի հայ հասարակութեան կողմից մասնակցելու ձևի և յօբելեանական յանձնաժողով կազմելու խնդիրը։ Հրաւէրները անուանական են։

✦ Ճան. հաղ. մինիստր Բուխլովը հոկտ. 7-ի ամբողջ օրը շրջեց Բաքուն և ծանօթացաւ հարկաւոր գործերի հետ։ Եղաւ նաև Սուրբախանում։ Անդրկովկասի երկաթուղիների կառավարիչ բարօն Բօսպը մինիստրին ներկայացրել է զեկուցում երկաթուղային ծառայողների կարիքների մասին։

✦ Թիֆլիսի կողմից Դումայի պատուիրակների ընտրութիւններից հաստատվեցին 1-ին և 2-րդ ընտրողական բաժիններում։ Իսկ ինչ վերաբերում է 3-րդ ընտրողական բաժնին, ինչպէս յայտնի է, ոչ ոք չը ստացաւ ձայների բացարձակ մեծամասնութիւն։ Կրկնաքուէարկութիւնը տեղի կունենայ հոկտ. 14-ին։ Այս անգամ առաջադիմականների թեկնածուներ բժ. Կար. (Գերասիմ) Նիկ. Ստեփանեանի, իշխ. Գ. Մ. Թումանեանի և Յովսէփ Խունունցի շանսերը աւելի մեծ են։

✦ Հոկտ. 8-ին քաղաքային դումայի նիստը ամբողջապէս նուիրվել է առևտրական հաստատութիւնների ծառայողների նօրմալ հանգստի պարտադիր կանոնների վերաքննութեան հարցին։ Վերնասրահում այդ օրը ժողովվել են մեծ թիվով գործատարներ, որոնք սկսել են աղմկել, տեսնելով որ դուման ճնշող մեծամասնութեամբ ընդունեց աշխատանքի երկարացման մասին եղած զեկուցումը։ Այսուհետև առևտուրը սահմանափակվելու է 11 ժամով, սկսած առաւօտեան ժամը 8-ից մինչև երեկոյեան ժամը 7-ը, հաշած երկու ժամեայ հանգիստը ճաշելու համար։ Իսկ ամառ ժամանակ յունիսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը թոյլատրվում է առևտուր անել առ. ժ. 8-ից մինչև երեկ. ժամը 8-ը՝ 3 ժամ հանգստով։ Թէ ձմեռ և թէ ամառ ժամանակ առևտուրը դեղախանութներում լինելու է ժամը 8—8, իսկ ծաղիկների խանութներում ժամը 9—9՝ երկու ժամեայ հանգստով։ Ապա, լսելով ձայնաւոր Ա. Բաբեանի յայտարարութիւնը, դուման որոշեց խանութտէրերին թողնել իրանց խանութների բացման և փակման ժամանակի ճիշդ որոշումը։ Իշխ. Ա. Մ. Արղութեանը հարց բարձրացրեց՝ թէ ցանկալի չէ թոյլատրել լրագրավաճառներին լրագիր ծախել երեկոյեան ի Վնաս ազգաբնակութեան, որովհետև լրագիրները նիւթեր տալիս են մինչև ց. ժամը 3-ը, այնպէս որ ազգաբնակութիւնը իրազեկ չէ լինում նոյն օրվայ երեկոյեան և գիշերը տեղի ունեցած դէպքերի մասին։ Այդպէս չեն մայրաքաղաքի թերթերը։ Վերջում որոշվեց թոյլ տալ առևտուրը 2 ժամով երկարել դեկտ. 23, 24, 30 և 31-ին, յունվարի 5-ին, Զարչարանքի շաբաթվայ հինգշաբթի և ուրբաթ օրերը, և Ծննդեան շաբաթվայ բոլոր օրերը։

✦ Երկուշաբթի, հոկտ. 8-ին, երեկոյեան ժամը 11 և 5 ր. Թիֆլիսում զգացվեց շատ թեթև երկրաշարժ։

✦ Ուր հարկն է՝ միջնորդութիւն է յաջուցված բանալու Թիֆլիսում դարձեալ եւրեք նօտարական գրասենեակներ։

✦ Այսօր իր առաջին դասախօսութիւնը կը կարդայ անատոմիայի մասին պրոֆ. Սուբբոտինը կանանց բարձր դասընթացքներում։

✦ Տեղական ռուս թերթերի ասելով, հոկտ. 8-ին Թիֆլիսում կատաւորվել են երդ.-հաւ. օգնական Բէբուրիշվիլին, որ ընտրվեց Դումայի պատուիրակ, և քաղաքային ծառայողներ Վ. Բօխլին և Լանդիան։

✦ Զերբասկալվեց Թիֆլիսում նաև բանտորների կողմից Դումայի պատուիրակ ընտրված Բաքրատ Մկրտումեանը։

✦ Ցունաց Բարեգործական Ընկերութիւնը իր վերջնթեր նիստում որոշեց մօտ օրերս իշխանութեան թոյլտուութեամբ մաղթանք կատարել տալ Թիֆլիսում և այլուր բալկանեան պատերազմի առիթով։ Ցիշեալ որոշումի կատար ածելը Ընկերութիւնը յանձնարարեց իր նախագահ Ի. Գ. Բատիանովին։ Նոյն Ընկերութեան նախաձեռնութեամբ և պատշաճաւոր իշխանութեան թոյլտուութեամբ կը կազմակերպվի «Կարմիր Խաչի» կոմիտէ, բալկանեան պատուիրակների զօրքերին օգնելու նպատակով։ Օգնութիւնը կարտայայտվի նիւթական աջակցութեամբ և դեղութեան խմբեր ուղարկելով։ Մաղթանքը, հաւանօրէն, կը կատարվի մի անգամ։ Լոյս են տեսել 1, 2 համարները։ Առաջնորդող յօդուածի մէջ լրագիրը ասում է, որ ինքը ունի համհատ դեր կատարելու և հեռու է խորը ծրագիրներից։ Նրա նպատակն է՝ ծառայել ժողովրդի բարեկեցութեան օգտին, գլխաւորապէս գիւղացիներին, մանր վաճառականների և արհեստաւորներին։

Նա ընթերցողներ է ուզում ձեռք բերել ժողովրդի ներքին խաւերից, որոնք հնարաւորութիւն չեն ունեցել ստանալ ստորին կրթութիւն և նպաստել նրանց լուսաւորութեան։ Տարեկան բաժանորդավճարն է՝ Սղընախում—1 ր. 40 կ., դուրսը—2 ր. 20 կ.։

N. N.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Այսօր, երեկոյեան ժամը 7-ին, Բօրսայի դահլիճում (Մանթաշեան առևտրական դպրոց, Բեհբութեան փող.) նշանակված է խորհրդակցական ժողով, ուր պէտք է քննվի ամսոյս 13-ին էջմիածնում կայանալիք յօբելեանական հանդէսին Թիֆլիսի հայ հասարակութեան կողմից մասնակցելու ձևի և յօբելեանական յանձնաժողով կազմելու խնդիրը։ Հրաւէրները անուանական են։

✦ Ճան. հաղ. մինիստր Բուխլովը հոկտ. 7-ի ամբողջ օրը շրջեց Բաքուն և ծանօթացաւ հարկաւոր գործերի հետ։ Եղաւ նաև Սուրբախանում։ Անդրկովկասի երկաթուղիների կառավարիչ բարօն Բօսպը մինիստրին ներկայացրել է զեկուցում երկաթուղային ծառայողների կարիքների մասին։

✦ Թիֆլիսի կողմից Դումայի պատուիրակների ընտրութիւններից հաստատվեցին 1-ին և 2-րդ ընտրողական բաժիններում։ Իսկ ինչ վերաբերում է 3-րդ ընտրողական բաժնին, ինչպէս յայտնի է, ոչ ոք չը ստացաւ ձայների բացարձակ մեծամասնութիւն։ Կրկնաքուէարկութիւնը տեղի կունենայ հոկտ. 14-ին։ Այս անգամ առաջադիմականների թեկնածուներ բժ. Կար. (Գերասիմ) Նիկ. Ստեփանեանի, իշխ. Գ. Մ. Թումանեանի և Յովսէփ Խունունցի շանսերը աւելի մեծ են։

✦ Հոկտ. 8-ին քաղաքային դումայի նիստը ամբողջապէս նուիրվել է առևտրական հաստատութիւնների ծառայողների նօրմալ հանգստի պարտադիր կանոնների վերաքննութեան հարցին։ Վերնասրահում այդ օրը ժողովվել են մեծ թիվով գործատարներ, որոնք սկսել են աղմկել, տեսնելով որ դուման ճնշող մեծամասնութեամբ ընդունեց աշխատանքի երկարացման մասին եղած զեկուցումը։ Այսուհետև առևտուրը սահմանափակվելու է 11 ժամով, սկսած առաւօտեան ժամը 8-ից մինչև երեկոյեան ժամը 7-ը, հաշած երկու ժամեայ հանգիստը ճաշելու համար։ Իսկ ամառ ժամանակ յունիսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը թոյլատրվում է առևտուր անել առ. ժ. 8-ից մինչև երեկ. ժամը 8-ը՝ 3 ժամ հանգստով։ Թէ ձմեռ և թէ ամառ ժամանակ առևտուրը դեղախանութներում լինելու է ժամը 8—8, իսկ ծաղիկների խանութներում ժամը 9—9՝ երկու ժամեայ հանգստով։ Ապա, լսելով ձայնաւոր Ա. Բաբեանի յայտարարութիւնը, դուման որոշեց խանութտէրերին թողնել իրանց խանութների բացման և փակման ժամանակի ճիշդ որոշումը։ Իշխ. Ա. Մ. Արղութեանը հարց բարձրացրեց՝ թէ ցանկալի չէ թոյլատրել լրագրավաճառներին լրագիր ծախել երեկոյեան ի Վնաս ազգաբնակութեան, որովհետև լրագիրները նիւթեր տալիս են մինչև ց. ժամը 3-ը, այնպէս որ ազգաբնակութիւնը իրազեկ չէ լինում նոյն օրվայ երեկոյեան և գիշերը տեղի ունեցած դէպքերի մասին։ Այդպէս չեն մայրաքաղաքի թերթերը։ Վերջում որոշվեց թոյլ տալ առևտուրը 2 ժամով երկարել դեկտ. 23, 24, 30 և 31-ին, յունվարի 5-ին, Զարչարանքի շաբաթվայ հինգշաբթի և ուրբաթ օրերը, և Ծննդեան շաբաթվայ բոլոր օրերը։

✦ Երկուշաբթի, հոկտ. 8-ին, երեկոյեան ժամը 11 և 5 ր. Թիֆլիսում զգացվեց շատ թեթև երկրաշարժ։

✦ Ուր հարկն է՝ միջնորդութիւն է յաջուցված բանալու Թիֆլիսում դարձեալ եւրեք նօտարական գրասենեակներ։

✦ Այսօր իր առաջին դասախօսութիւնը կը կարդայ անատոմիայի մասին պրոֆ. Սուբբոտինը կանանց բարձր դասընթացքներում։

✦ Տեղական ռուս թերթերի ասելով, հոկտ. 8-ին Թիֆլիսում կատաւորվել են երդ.-հաւ. օգնական Բէբուրիշվիլին, որ ընտրվեց Դումայի պատուիրակ, և քաղաքային ծառայողներ Վ. Բօխլին և Լանդիան։

✦ Զերբասկալվեց Թիֆլիսում նաև բանտորների կողմից Դումայի պատուիրակ ընտրված Բաքրատ Մկրտումեանը։

✦ Ցունաց Բարեգործական Ընկերութիւնը իր վերջնթեր նիստում որոշեց մօտ օրերս իշխանութեան թոյլտուութեամբ մաղթանք կատարել տալ Թիֆլիսում և այլուր բալկանեան պատերազմի առիթով։ Ցիշեալ որոշումի կատար ածելը Ընկերութի

վի Ալէքսանդրո-Նեվսկի զինուորական տաճարում։

✦ Մեզ հաղորդում են, որ այս ամսի 16-ին, երեքշաբթի երեկոյեան, ի նպաստ արտիստ Գալֆայեանի՝ Ամ.-Խարազեանը ներկայացնելու է Ստրինբերգի «Հայրը», դրամա 3 գործ., իսկ արտիստ Գալֆայեանը «Համլէտից» 2 տեսարանը պէտք է խաղայ՝ «Լինել և չը լինել» և Օֆելիայի հետ տեսարանը։ Ներկայացումից գոյացած գումարով Գալֆայեանը պիտի մեկնի արտասահման բժշկվելու։ Պէտք է ապաւել, որ հայ հասարակութիւնը անտես չի անի հոկտ. 16-ը, որովհետև դեռ մինչև օրս էլ ռուս մամուլը կշտամբում է հայ հասարակութեան, որ նա չէ կարողանում որևէ կերպ ապահովել իր հիւանդ արտիստի դրութիւնը, որ մի ժամանակ մեծ էստետիկ բաւականութիւն է պատճառել իր ազգու խաղով։

✦ Թիֆլիսի մէշչանների ընկերութեան լիազօրների ժողովը հերթական խնդիրների համար նշանակված է վաղը, երեկ. ժամը 7½-ին։

✦ Երէկ մեր խմբագրատան գրասենեակը մտաւ շուշեցի մի այրի կին իր մանկահասակ չորս որբերով և յայտնեց, որ իր ամուսինը վերջին տարիների պատահարների ժամանակ սպանվելով՝ ինքն ու իր զաւակները մնացել են յետին թշուառութեան մէջ։ Խեղճ կինը խնդրում է բարերար անձանց՝ ըստ չափու կարողութեան օգնութեան ձեռք կարկառել իրան, գոնէ առժամանակ ամրացնելու իր ապաքաղ երեխաների քաղցը։ Հասցէն՝ Սուրբ Սարգսի վերելք № 44, տուն Կ. քահ. Արարատեանի։

✦ Շուտով Բրիւսէլից ստացվելու են նոր վագոններ էլէքտրաքարշի համար։

✦ Գանձակից հեռագրում են «Т. Л.»-ին, որ մի խումբ հայերի նախաձեռնութեամբ բացվել են Գանձակում երեկոյեան դասընթացքներ անգրագէտ բանւորների համար։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՔՆՆԱԴԱՏԵԼՈՒՑ ԱՌԱՋ ՊԷՏՔ Է ԸՄԲՌՆԵԼ.*)

II

Պ. Մարտ. Ցարութիւնեանը մի յօդուած է զետեղել «Հօրիզոնում» (№ № 196, 197) «Գարունի» մասին՝ «Դասակարգային արշինը գեղարուեստական քննադատութեան մէջ» վերնագրով։

Պարոնը, եթէ չեմ սխալվում, Ե. Ֆրանգեանի «զուտ գիտական և փիլիսոփայական» ժողովածուի զտարիւն գիտնականներից է, որ «զուտ գիտութիւնը» թողած՝ վերջերս գրական քննադատի դեր է ստանձնել։

Նա փորձում է պատճառաբանել պ. Ահարոնեանի պնդումները, ուստի հետաքրքրական է գոնէ նրանից իմանալ, թէ ինչումն է իմ անբարեխղճութիւնը և կուսակցական նեղսիրտ ոգին, որոնք հոգեկան հաւասարակշռութիւնից հանել են պ. Ահարոնեանին։

«Մարդը ուզենայ-չուզենայ փիլիսոփայում է»։

«Եւ փիլիսոփայութիւնը, ինչպէս շատերն են մտածում, դատարկ գլուխների, պարապ մարդկանց գործը չէ, այլ, եթէ կուզէք, նա ամեն մարդու գործն է»։

Այսպէս է ասել «Միտք» ժողովածուի խորիմաստ խմբագիրը, և նրա միամիտ աշխատակից պ. Մարտ. Ցարութիւնեանը, համոզված՝ որ փիլիսոփայելը ամեն մարդու գործ է, քննադատի գրիչ է վերցրել, որպէսզի դրականապէս ապացուցի, որ գրական քննադատութիւնը ամեն մարդու գործ չէ։

Ի՞նչպէս է արտայայտվել իմ յօդուածում «դասակարգային արշինը»։ (Իմ ընկերները պաշտպանութեանս կարօտ չեն, ուստի ես միայն ինձ վերաբերող քննութեամբ կը զբաղվեմ)։

Պ. Ցարութիւնեանի կարծիքով, ես միայն մի ցանկութիւն եմ ունեցել,—«դաս տալ» Ահարոնեանին «զորս դու պատուիրեցեր»։ Նրա ասելով, ես մտածում եմ գրողին ոչ թէ իբրև մի հեղինակի, որի արժանիքներն ու պակասութիւնները պէտք է պարզաբանել, «այլ իբրև մի կուսակցական հակառակորդի, որին à tout prix պիտի սեացնել»։ Պ. քննադատը «պոռոտախօսութիւն, ինքնագովութիւն, ֆրազաբանութիւն և զարմանալի նեղսահայեցութիւն» է գտնում իմ յօդուածում և, բնականաբար, զայրանում։ Ինչպէս տեսնում էք, ըստ էութեան նոյն մեղադրանքն է, ինչ որ մենք լսեցինք պ. Ահարոնեանից։

Սակայն այդպէս է արդեօք, իսկապէս իմ նպատակը սեացնելն է եղել։

Ամեն մի գրագէտ հայ գիտէ, թէ որպիսի անհաշտ ժխտողական վերաբերմունք է եղել հայ մարքսիստների կողմից դէպի ազգային շարժումը մեզանում։

Կուսակցական պայքարի շիկացած մթնոլորտում յաճախ մոռացութեան են տրվել այդ շարժման առողջ տարրերը և ամբողջ շարժումը համարվել է բացարձակ ռէակցիոն և վնասակար։

Ես չէի կարող գեղարուեստական քննադատութեան մէջ երկար կանգ առնել այդ խնդրի վրայ, բայց և այնպէս իմ պօղիցիան պարզ է։

Բանակռուելով խիստ քննադատների դէմ, ես գալիս էի այն եզրակացութեան, որ ազգային շարժումը մեզանում դրական երևոյթ պէտք է համարել (եր. 147)։ Ուրեմն այս կարևոր կէտում ես չեմ ընդունում մեր մարքսիստների մէջ տարածված տեսակէտը։ Եւ մարքսիստ ընթերցողներից շատերը չեն հաւանի իմ բռնած դիրքը դէպի ազգային շարժումը։ Այսպէս է առաջնորդել ինձ «կուսակցական ոգին»։

Այս՝ շարժման մասին։ Իսկ իմ վերաբերմունքը դէպի Ահարոնեանը, որին ես «զորս դու պատուիրեցեր»... Բաց արէք «Գարունի» 147-դ երեսը և կարդացէք Ահարոնեանի մասին։

«Նրա զայրոյն սիրտը չէ տանում չարն ու բռնութիւնը։ Նա տանջվում է, լալիս մարդկային ցաւի համար, բողոքում մարդկային բարբարոսութեան դէմ։ Խոր յարգանքի զգացմունք պէտք տածել դէպի գրողը, որ կարողացել է մեր կեանքի սոսկալի պայմաններում էլ բարձր պահել մարդասիրութեան անբիծ դրօշակը»։

Կուրացած Մարտ. Ցարութիւնեանը պընդում է, որ իմ միակ ցանկութիւնը Ահարոնեանին սեացնելն է։ Նոյնպիսի սեացում են հետևեալ տողերը (երես 161)։

«Ահարոնեանի մեղքը չէ, ես կարծում եմ, որ նրա եղբայրասիրական քարոզը մեր կեանքի հրէշաւոր պայմաններում յաճախ բեկբեկվել են, որպէս Թունոտ շովինիզմ»։

Վերջապէս այս տողերով չափեցէք իմ դատախազների կուրութիւնը (երես 141)։

«Վշտացած հայի ականջում հնչեց Ապրօյի յուսահատ ճիչը՝ «զուլում, զուլում, զուլում...» և Ահարոնեանի անունը մեծ հմայք ստացաւ։ Նա մինչև այսօր էլ կեանքի զուլումներն է տեսնում գլխաւորապէս։ Եւ այսպէս՝ փոքրիկ տաղանդը դարձաւ պատմաշրջանի արտայայտիչ, փոքրիկ գրողը՝ մեծ քաղաքացի»։

Այս տողերը գոյութիւն չունեն իմ քննադատների համար։ Ճշմարտութիւնը չէ նրանց հետաքրքրողը։ Ազգային շարժման ամենափայլուն շրջանում անգամ, երբ Ահարոնեանի անունը թնդում էր ամենուրեք, նա չէ արժանացել մեծ քաղաքացու բարձր անուան։ Այժմ նրա սկզբունքային հակառակորդը առաջին անգամ պատում է նրան այդ անունով, և, զարմանալի բան, ենթարկվում թունոտ կասկածների։

Մթթէ այսպէս են առաջնորդվում «կուսակցական ոգով»։ Մեծարելով։

Պարոնայք, գոնէ տարրական բարեխղճութիւն։ Հաւատացէք, վերջապէս, որ կարելի է յարգանքով վերաբերվել դէպի հակառակորդը։

Քննադատեցէք, որքան կարող էք, բայց մի խեղաթիւրէք իմ մտքերը, նախ և առաջ հասկացէք ինձ։ Ես շատ պարզ եմ խօսում։

Թողէք այն ծիծաղելի նախապաշարմունքը, թէ իբր մարքսիստները վանդալական թիթեռամտութեամբ միայն յարձակվել գիտեն։ Թումանեանն ու Իսահակեանը, Շիրվանզադէն ու Նար-Դոսը նոյնքան հեռու են մեզանից, որքան Ահարոնեանը։ այնու ամենայնիւ դրանց տաղանդները ժխտողներ չը կան։ Թումանեանի և Իսահակեանի վանող ազդասիրութիւնը չէ խանգարում, որ դրանք լինեն իմ ամենասիրելի բանաստեղծները։ Խօսքը կտուրը գցելն ամօթ է։ Ահարոնեանին ես մօտեցել եմ իմ ըմբռնած գեղարուեստական մասշտաբով, և նրա մասին միայն կարող է խօսք լինել։

Պ. Ցարութիւնեանը թերի է համարում իմ վերլուծութիւնը և չէ կարողանում հասկանալ, թէ ինչու եմ ես բացասաբար վերաբերվում դէպի Ահարոնեանը, թէև միանգամայն համաձայնում է ինձ։

Անհաւատալի է, չէ։

Նա գրում է իմ մասին. «Ռէալիստական գեղարուեստի պահանջներից վերլուծելով Ահարոնեանի բոլոր գործերը (ըստ որի մասին չէ կարող խօսք լինել։ Ց. Ս.), նա ճիշդ կերպով նկատում է, որ Ահարոնեանը տիպեր չունի ստեղծած, որ նրա պատկերները զուրկ են կենսական ճշմարտութիւնից և այլն»։

Ցօդուածիս ընթերցողը գիտէ, որ իմ հիմնական թէզն էլ այդ է, որ Մարտ. Ցարութիւնեանը միանգամայն հիմնաւորված է գտնում, քանի որ այդ եզրակացութեանը ես եկել եմ Ահարոնեանի բոլոր գործերի վերլուծումով։ Կասկած չը թողնելու համար, նա կրկին անգամ պնդում է, որ ուր Ահարոնեանը «ստեղծագործում է անձնաւորութիւններ և պատկերներ, դրանք թոյլ են, անկենդան, յաճախ անբնական»։

Թւում է, թէ էլ խօսելու բան չունենք, և աւելորդ են պ. քննադատի անատամ սրբախօսութիւնները ու պառաւական բարոյախօսութիւնները. մենք միևնոյն հայեցակէտն ունենք Ահարոնեանի վերաբերմամբ։

Բայց չէ՞ որ Ֆրանգեանն ասել է, թէ «մարդը ուզենայ-չուզենայ փիլիսոփայում է». միւս կողմից՝ պէտք է արդարացնել կծու վերնագիրը, գտնել «դասակարգային արշինը»։

Եւ այսպէս երկու անգամ ընդունելով իմ կարծիքը, պ. քննադատը չէ կարողանում հասկանալ իմ բացասական վերաբերմունքի պատճառը, թէև, նրա ասելով, ճիշդ եմ նկատել, որ «Ահարոնեանը տիպեր չունի ստեղծած, որ նրա պատկերները զուրկ են կենսական ճշմարտութիւնից և այլն»։

Ապա իմ բացասական վերաբերմունքի պատճառը...

Ի հարկէ կուսակցականութիւնն է, ձայնակցում է պ. Ահարոնեանին Մարտ. Ցարութիւնեանը։

Ահա թէ ուր է տանում տրամաբանական «արշինի» բացակայութիւնը։

Սակայն որոնք են Ահարոնեանի տաղանդի իմ կողմից չը գնահատված լաւ կողմերը, որոնց համար իմ քննադատը դիմում է այսպիսի հերոսական-անձնասպան միջոցների։

Տեսէք, թէ որքան սրամիտ գրուածք է մեր սիրելի Կրիլովի «Անապատականն ու արջը»...

Ցարութիւնեանն ասում է, որ Ահարոնեանը «գեղարուեստօրէն ներկայացնելու մէջ անզօր» է և զուրկ «պատկերացնող երևակայութիւնից»։ Նրա «ամենալաւ գործերը նրա ճանապարհորդական նկարագրութիւններն են՝ «Իտալիայում» և այլն, կամ միւս գործերից էլ այնպիսի կտորներ, ուր նա տալիս է իր տեսած բանի նկարագրութիւնը, ինչպէս «Մրրկի Սուրբ»-ում ջրաղացի նկարագրութիւնը, կամ մի այլ տեղ շվէյցարական լեռների, ձմերային լանդշաֆտի նկարագրութիւնը և այլն։

Այդպիսի դէպքերում նա անզուգական է։

Ահարոնեանի անզուգական փաստաբանը նրա մէջ ոչինչ չէ գտնում, բացի նկարագրական տաղանդից։

Ցուսով եմ, որ յօդուածիս ընթերցողը կը համոզվի, թէ Ահարոնեանը այդ աստիճան աննշան տաղանդ չէ։

Այնու ամենայնիւ, ես «տապալում», «սեւացնում» եմ, իսկ պ. Ցարութիւնեանը պաշտպանում։ Ուրիշ պաշտպան չունէր «Հօրիզոնը» Ահարոնեանի համար։

«Դասակարգային արշինը» այսպիսի ճարպիկութեամբ աչքս խոթելով, պ. Ցարութիւնեանը անողոքմ ծաղրի է ենթարկում Ահարոնեանին։ Նրա ասելով, Ահարոնեանը թէև փոքրիկ գեղարուեստագէտ է,—այն ինչ որ ես եմ պնդում իմ յօդուածում,—բայց մտայնապէս բարձր անհատ է։

Խորոր մտայնութեան նշաններից մէկն էլ... գիտէք ինչն է,—Ահարոնեանի «վերամբարձ գունեղ ոճ»։

Միանգամայն լուրջ։

Տեսնես մտայնապէս ո՞ր աստիճանի «անհատներ» են «վերամբարձ գունեղ ոճի» առողջ հակառակորդները՝ Տօլստոյն ու Դոստոեվսկին։ Մթթէ արդարացի չէ Շէքսպիրը՝—լաւ է լինել խեղճ ցիմար, քան թէ ցիմար իմաստուն։ Ցոլակ Խանդադեան

Մեծ-Ղարաբիլիսա

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Կ. Պոլսից տեղեկացնում են, որ Թիւրքիան Իտալիայի հետ կապել է գաղտնի դաշն բալկանեան պետութիւնների դէմ միասին գործելու համար։ Հաւատացնում են նոյնպէս, որ նրանց միանալու է և Աւստրիան։

✦ Սալար-ուդ-Դովլէն մօտեցել է Թէհրանին։ Նրա դէմ եղաւ Ղազվինի զօրամասը։

✦ Թիւրքիան գերմանական բանկերից վերցրեց ոչ թէ 10 միլիոն, այլ 70 միլիոն ֆունտ իր գումարը, որ պահվում էր դեռ Աբդիւլ-Համիդի ժամանակից։

✦ Պետերբուրգում գործադուլ սրին Պուտիլովի գործարանի 12,000 բանւոր։

✦ Իլիոդոր աբեղան փախել է այն վանքից, ուր նա ճգնում էր սինոդի կարգադրութեամբ։

✦ Զինուորական մինիստր Սուխոմլինովը պատուիրեց բոլոր զինուորական կանոններին խուսափել խօսելու մամուլի ներկայացուցիչների հետ բալկանեան դէպքերի մասին։

✦ Պետերբուրգի բանւորների կողմից Դումայի պատուիրակ ընտրված 6 հոգին պատկանում են սոց.-դեմ. կուսակցութեան «բոլշեվիկ» խմբին։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

9 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գրաւվեց «Лучъ»-ի 20-րդ համարը։

Հոկտեմբերի 15-ին Հաագայում բացվում են դատական վիճաբանութիւններ միջնորդ դատարանում շվէյցարացի իրաւաբան Լաֆդիի նախագահութեամբ, այն բազմամիլիոն վէճի առիթով, որ Ռուսաստանը պահանջում է Թիւրքիայից 1878 թ. պատերազմում ռուսահպատակների կրած վնասների համար։

ԱՍՏՐԱԽԱՆ։ Եկաւ ճան. հաղ. մինիստրը։ Ժանտախտով հիւանդ բժ. Դէմինսկին մեռաւ։

ԲԷՐՕՆԱ։ Բերլինից կիրակի օրը դուրս եկած արաղ գնացքը երէկ երեկոյեան խորտակվեց Զէրբինոյի մօտ։ Վիրաւորված են 10 մարդ։

ՀՌՕՄ։ Ծովային մինիստրութիւնը անթել հեռագիր է հաստատում Հռոմից Տրիպոլիս։

Թէ ինչու խաղող է մեր կարեմերեանների պահանջը

Ուղղակի Բերլինից ուղարկվող մեր կարեմերեանները շնված են տեխնիկայի վերջին խօսքի համաձայն, պատրաստված են ամենալաւ նիւթից, ունեն բոլոր անհրաժեշտ պատկանելիքները և նորագոյն յարմարութիւնները, կարում են համահաւասար, չքեղ և արագ, չեն փչանում և չեն մաշվում գործածելուց, և միևնոյն ժամանակ **երկու անգամ աւելի էժան են** միւս ֆիրմաների գնից։ Մի շաբաթ գնել որևէ անյայտ ֆիրմայից, այլ ուղղակի դիմէք մեզ, և մենք ձեզ խոսքն կուղարկենք **ձրիաբար** մեր պատկերազարդ կատալոգը ռուսերէն լեզուով։

Հասցէն

Международный Эксп. Х. Финкельштейнъ, Германія, Берлинъ, ул. Кантъ 120/44.
Exporthaus H. Finkelstein, Berlin, Kantstrasse 120/44.

Թղթակցութիւններն ուղարկել ռուսերէն լեզուով։

(25, Ն. 15) (Л. 12704) 3—1

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Քթի թաշկինակները ընդհանուր գործածութիւն են ստացել համեմատաբար նոր ժամանակներում։ Հին յոյները և հռոմայեցիք վատ նշան էին համարում քթի մաքրութեան մասին հոգալը և թաշկինակ բանեցնող մարդկանց վրա նայում էին որպէս վայելչութեան կանոններին չը հետևողների վրա։ Թուրատրվում էր թաշկինակը միայն երեսի քրտինքը սրբելու համար, թէև դրան էլ ստինքան հաւան չէին ազնուական հռոմայեցիք։ Պէտք է կարծել, որ յաճախակի լողանալը, որ շատ ընդունված էր մանաւանդ պատրիկների շրջանում, հպատաւոր կերպով էր ազդում քթի լորձաթաղանթի վրա, որը դրա շնորհիւ համարեա լորձունք չէր արտադրում։ Այդպիսով, ուրեմն, իւրաքանչիւր ոք, ով կարիք էր զգում քթի թաշկինակի, դրանով ցոյց էր տալիս միայն, որ ըստ հարկին շուտ-շուտ վանում չէ ընդունում. այստեղից է և թաշկինակների հալածանքը հռոմէական ընտիր հասարակութեան շրջանում։

Մինչև դարերում վանում ընդունելու գեղեցիկ սովորութիւնը փոխվեց սոսկալի կեղտոտութեան,—ահա հէնց այդ ժամանակներից էլ քթի թաշկինակները քաղաքացիութեան իրաւունք ստացան մինչև մեր օրերը։ Այդ երևոյթը հետաքրքրական է դառնում նաև նրանով, որ նրան կարելի է կապել մարմնապաշտութեան հետ հեթանոսական դարում և մարմնի արհամարհանքի՝ քրիստոնէութեան շրջանում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



ԱՆԿԱՐԱԳՐԵԼԻ ԱԽՈՐԺ ԶԳԱՑՄՈՒՆՔ է նկատվում, երբ գլուխը լուացվում է Պիկսաֆօնով, քնքոյշ, հեղուկ ձիւթային սապօնով, որ նշանակված է գլխի լուացումների համար և որը քիմիական պատէնտային միջոցով մաքրված է ձիւթային վատ հոտից։ Պիկսաֆօնը ոչ միայն մաքրում է մազերը, այլ և, շնորհիւ իր մէջ պարունակվող ձիւթի, ուղղակի զգրգեցուցիչ կերպով ազդում է մազերի արմատի վրա։ Բացի այդ, նա տալիս է հարուստ փրփուր և շատ հեշտութեամբ մաքրվում է մազերի վրայից։

Պիկսաֆօնով մի քանի անգամ լուացվելուց յետոյ ամեն ոք զգում է նրա բարերար ազդեցութիւնը և համոզվում, որ Պիկսաֆօնը իսկապէս ամենալաւ միջոցն է գլխի կաշին մաքրելու և մազերը ամրացնելու համար։

Պիկսաֆօնի մէկ սրուակը, որը բաւականանում է մի քանի ամիս, արժէ 1 ր. 50 կոպ.։ Վաճառվում է բոլոր համապատասխան խանութներում։ Ամենալաւ վարսավիրները գլուխների լուացումը կատարում են Պիկսաֆօնով։ (M.391722/391729)

ԲՈՒԺԱՐԱՆ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով
ՓՈԽԱԴՐՎԵԼ Է ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆ

Միխայլովկի պր. № 49, և անկիւն Լէյտօվկի փողոցի № 2. Տէլէֆոն № 10—26.

Հիւանդների ընդունելութիւնը.

Աղաջանեան Միքայէլ.—միզասեռ., սիֆիլիս և կաշուի հիւ., ժ. 11—12-ը։
Վ.նուկով Վ. Վ.—խիրուրգ. հիւ., ժ. 1—2-ը։
Եղիազարեան Ի. Ն.—ներքին, ջղային և հոգեկան հիւ., էլեքտրաէներգիա, ժ. 11—12-ը։
Ելյինով Մ. Ր.—ականջի, քթի և կոկորդի հիւ., ժ. 12—1-ը։
Կիմօնեա Մ. Պ.—խիրուրգ. հիւ., ժ. 11—12-ը։
Մաղաքեան Գ. Ն.—ներքին և երեխ. հիւ., առանձ. նապէս որովայնա-աղիքային, ժ. 11½—12½-ը։
Շամաս Ի. Ի.—խիրուրգ. հիւ., ժ. 12—1-ը։
Աւալօվա Ա. Ա.—ատամի հիւանդութիւններ, ժ. 9½—11½-ը։

Բուժարանում կատարվում է էլեքտր. բժշկութիւն և մասաժ։ Միկրոսկոպ., բակտէրիոլոգ. և քիմիակ. հետազօտութիւններ։ Ծաղկի պատուաստումներ։ Սանդուղների քննութիւն։ Խորհրդի վճարը **50** կոպ.։ Օպերացիաները և համախորհուրդները ըստ համաձայնութեան։ Հիւանդների բժշկումները բաղկացած է թէ ընդհանուր պատից և թէ առանձին նոմէրներից։

ՍՐՍԿՈՒՄՆ «914»-ի և «606»-ի։

(Ե. Հ. Կ.) 706. 100—9

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
ՅՕԳՈՒՏ „ՄՇԱԿԻ“ ՖՕՆԴԻ

հետևեալ գրքերը՝

1) «ՄՇԱԿ ԵՒ ՀԱՑ ԿԻՆԸ» գ. 1 ր.
2) «ՄՇԱԿԻ» ՔԱՌԱՄՆԱՄԵԱԿԸ կազմեց Լ. Դանիէլեան » — 50 կ.
3) ՀԱՄԱԼԻ ՄԱՍԼԱՀԱԹՆԻՐԸ » — 30 կ.
4) ԿԱՑԷՆԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ, դրամա 5 գ. Աւ. Առաքելեանի » — 50 կ.
5) ՔԱՌԱՄՆԱՄԵԱԿ «ՄՇԱԿԻ» («Մշակի» յօբելեանի առթով «Տարազի» հրատարակած ալմանախ) . . . » 1 ր.

Վերոյիշեալ հրատարակութիւններից մի-մի օրինակ պահանջողները ճանապարհածախս չեն վճարում։

(4) 10—5

ԴԻԻԲՈՒԱՅԻ ՀԱԲՕՐԱՏՕՐԻՈՅԻ Պարիզում.
ԵՕԴԻՐԻՆ բժիշկ ԴԷՇԱՆԻ
(Iodhyrine du d-r Deschamp)
Ծաւ ընդունված միջոց
ՁԱԳԱՆԱԼՈՒ ԴԷՄ

որ խորհուրդ են տալիս բժիշկները, փառաւոր հետևանքներով։ Բժշկապետ Դէշանի Եօդիրինը նշանաւոր միջոց է համարվում ջղային թերութեան դէմ. նրա աջող ներգործութիւնը նկատվում է հէնց բժշկութեան սկզբում։

Բժշկապետ Դէշանի Եօդիրինը բոլորովին անվնաս է օրգանիզմի համար։

Հեռացնում է ջղային թերութիւնը աստիճանաբար շատ կարճ ժամանակամիջոցում։

Արկղիկը, որ պարունակում է 60 դեղհատ, արժէ 4 ր. 25 կոպ.։

Ծախվում է բոլոր դեղատներում և դեղատնային խանութներում։

Ընդհանուր ներկայացուցչ. Ռուսաստանում Торг. Домъ Люксембургъ и К-о, Варшава, Журавья, 40.

(В. 47056) 8—3

Учредителя Бухгалтерскихъ Курсовъ
Н. В. Абраамяна,
вышли изъ печати и поступили въ продажу:

I
Руководство торг. бухгалтеріи
въ связи съ керосинов. производствомъ (2 изд. допол. и исправл.) Ц. 2 р. 50 к.

II
Таблица вычисл. процентовъ
отъ 1 до 360 дн. отъ ¼ до 12% и на всѣ капиталы отъ 1 до 10,000 р. (2 изд.) Ц. 85 к.

III
Общедоступная справочн. книжка
для слушателей и слушательницъ бухгалтерск. курсовъ (2 изд.) Ц. 30 к.

IV
Журнальныя статьи
для опредѣл. дебета и кредита. Ц. 75 к.

V
Առեւտրական հաշւապահութիւն
(հայերէն)
երկաթ., բակալ., կօլոնիալ և բամբակ առեւտրի վերաբերեալ։

Այս վերջին գիրքը լոյս կը տեսնի սեպտեմբ. վերջերին։ Նրանք, ովքեր կը կամենան ունենալ այս գիրքը, պէտք է դիմեն գրագրվին։

Ցիշեալ հրատարակութիւնների պահեստը Թիֆլիսում, հեղինակի մօտ, Նիկոլայէվսկայա փող. № 22.

(Հ.Կ.) 663. 10—10

Լոյս տեսաւ
Յ. ՍՕԼՕՎԵԱՆԻ
„ՍԱՒԱՌՆՈՂ ՈԳԻՆ“
Վ. Է. Պ.
ԳԻՆԸ 40 ԿՕՊ.

Դիմել հեղինակին, Тифлисъ, Ремесленное училище, Акиму Соловьянцу.

—o—

Թիֆլիսի գրախանութներում գտնվում է նոյն հեղինակի՝

1) «Հայ քնարերգութեան փլիսոփայութիւնը». . . . . 50 կ.
2) «Ես տիկին ունեմ» (մանկ.) 10 կ.

Հեղինակին դիմողները ճանապարհածախս չեն վճարում։

Միւս գրուածքները սպառված են։

(Հ.Կ.) 674. 10—10

Եղբ. Աւսարգիսովների

այդին բաց է թողնում արտասահմանեան, ռուսական և տեղական լաւ տեսակի ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐ չափաւոր գներով։ Կատալոգներն ուղարկում են Զրի։

Հասցէն՝ Ст. Скра (Зак. ж. д.), Авсаркисову.

(Ե.Հ.Կ.) 739. 10—4

Ներկայ հոկտեմբեր ամսի 1-ից Պուշկինսկայա փողոցում № 29 Դոլուխանեանի շինութեան մէջ, քաղաքի կենտրոնում,

ԲԱՑԵԼ ԵՄ ԵՒՐՕՊԱ ՀԻՒՐԱՆՈՑ,

բաղկացած բոլորովին մաքուր՝ նոր կահկարասիքով կահաւորված մարներից։ Էլեքտրական լուսաւորութիւն, վաննա, դուշ։ Գները չափազանց մատչելի են։

Խորին յարգանքով՝ Կ. Խաչիկեանց

(Հ. Կ.) 748. 10—2

*) Տես «Մշակ» № 224

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный